2004, ՀՈՒԼԻՍ Ա, ԹԻՎ 13 (177)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Փասադենայի քաղաքագլխին եւ ոստիկանապետին

Հուլիսի 3-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց ԱՄՆ Փասադենայի քաղաքապետ Բիլ Բոգաարդին, քաղաքի ոստիկանապետ Բերնարդ Մելեքյանին եւ ուղեկից պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց նրանց՝ Հայաստան կատարած այցի առիթով, որով զորացնում են Փասադենայի կապերը քույր քաղաք Վանաձորի հետ: Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ Փասադենայում բնակվող հայորդիների եւ Ս. Գրիգոր եկեղեցու գործունեությանը՝ նշելով. **«Բազում հայորդիներ Ձեր քաղաքի արժանավոր զավակներ են, որոնց նկատմամբ ունեցած սերն ու հարգանքն է, որ առաջնորդել է Ձեր քայլերը դեպի Հայաստան»**:

Իր հերթին պրն. Բոգաարդը շնորհակալություն հայտնեց ընդունելության համար, ապա Հայոց Հայրապետին հանգամանորեն տեղեկացրեց Հայաստանի՝ մասնավորապես Վանաձորի հետ կապերը զարգացնելու ու զորացնելու առկա հնարավորությունների, գործնական քայլերի եւ ծրագրերի մասին՝ հույս հայտնելով բարեհաջող կերպով իրականացնել իրեն վստահված առաքելությունը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու առաքելության, ներկայիս մարտահրավերների ու հոգեւոր կյանքի մասին:

### Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵԽԽՎ գլխավոր քարտուղարին

Հուլիսի 5-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵԽԽՎ գլխավոր քարտուղար Բրունո Հալերին եւ նրա պատվիրակությանը՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար Հայկ Քոթանյանի եւ ԵԽ-ում ՀՀ դեսպան Քրիստիան Տեր-Ստեփանյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը գոհունակություն արտահայտեց այն կապերի ու հարաբերությունների համար, որ ծեւավորվում են Հայաստանի Հանրապետության եւ Եվրախորհրդի միջեւ՝ վստահություն հայտնելով, որ այսօրինակ այցերը, անտարակույս, իրենց դրական ներգործությունն ու ազդեցությունը կունենան Հայաստանի Հանրապետության՝ Եվրամիությանն անդամագրվելու գործընթացի վրա:

Իր հերթին պրն. Հալերը հանգամանորեն ներկայացրեց Խորհրդարանական վեհաժողովի գործունեությունը: ԵԽԽՎ գլխավոր քարտուղարը կարեւորեց միջխորհրդարանական համագործակցությունը, անդրադարձավ նաեւ մարդկության զարգացման գործում քրիստոնեության եւ քրիստոնեական արժեքների կարեւոր դերին ու նշանակությանը:



### Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Բելառուսի Հանրապետության ՆԳ նախարար Վլադիմիր Նաումովին

Հուլիսի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարար Վլադիմիր Նաումովին՝ ՀՀ ոստիկանության պետ Հայկ Հարությունյանի ընկերակցությամբ:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ հայ եւ բելառուս ժողովուրդների միջեւ դարավոր կապերին, բարձր գնահատեց երկու նախարարների համագործակցության ոգին:

Հայոց Հայրապետն անդրադարձավ նաեւ եկեղեցի-պետություն հարաբերություններին, ներկայացրեց Հայ Առաքելական եկեղեցու առաքելությունն ու գործունեությունը:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունն իր ջերմ ողջույններն ու բարեմաղթանքները խնդրեց փոխանցել Համայն Բելառուսի Պատրիարքական էկզարք Ֆիլարետ միտրոպոլիտին:

### Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սբ. Գրիգոր Լուսավորիչ շքանշան հանձնեց Վիտալի Գրիգորյանցին

Հուլիսի 10-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն, հընթացս որի Նորին Սրբությունը մոսկվաբնակ բարերար Վիտալի Գրիգորյանցին պարգեւատրեց Հայ Առաքելական Ս. եկեղեցու բարձրագույն՝ «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:



Բացման խոսքով հանդես եկավ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը: Նա անդրադարձավ բարերար հայորդու կենսագրությանն ու անցած ուղուն եւ այն անհուն սիրուն ու նվիրմանը, որ ունի Վիտալի Գրիգորյանցը՝ հանդեպ մեր հայրենիքն ու Ս. Էջմիածինը: Այնուհետեւ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց հայրապետական սրբատառ կոնդակը, որով Նորին Սրբությունն իր գնահատանքն էր հայտնում եկեղեցանվեր բարերարին:

*«Անձնապես ճանաչում ենք Ձեզ եւ այսօր առանձնակի գոհունակությամբ ենք անդրադառնում Ձեր բարի գործերին, որոնք միտված են Ռուսաստանում բնակվող մեր ժողովրդի զավակների ազգային-եկեղեցական կյանքը զորացնելու ազնիվ նպատակին: Մենք տեղյակ ենք, թե որքան մեծ աջակցություն եք բերում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմին եւ հատկապես Մոսկվայի Սուրբ Խաչ եկեղեցու կառուցման աստվածահաճո գործին, որ լինելու է առաջնորդանիստ եկեղեցին տիրախնամ թեմի: Ռուսաստանում եւ մասնավորաբար նրա մայրաքաղաք Մոսկվայում բնակվող մեր ժողովրդի բազմահազար զավակներ, որ աղոթքի պիտի կանգնեն նորակառույց եկեղեցում, մշտապես երախտագիտությամբ պիտի հիշեն Ձեզ եւ պատվարժան բոլոր հայորդիներին, ովքեր ջանք ու ներդրում ունեն եկեղեցու կառուցման ազգօգուտ գործում:*

*...Ամենակարող Աստծո օրհնությամբ Դուք Ձեր կարողությունները ծառայեցրել եք նաեւ լուսավորչապայծ մեր Սուրբ Աթոռի՝ համայն մեր ժողովրդի հոգեւոր նվիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինությանն ու պայծառությանը: Դուք, արդարեւ, բարեգործ եւ հավատավոր զավակն եք բարեպաշտ մեր ժողովրդի եւ արժանի՝ հայրապետական բարձր գնահատանքի»*,- ասվում է հայրապետական կոնդակում:

Պարգեւատրումից հետո Վիտալի Գորիգորյանցն իր խորին շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ հավաստիացնելով, որ իր կարելին պիտի անի հայրենիքի, Հայաստանյայց Եկեղեցու եւ Ս. Էջմիածնի պայծառության ու բարգավաճման համար:

Վերջում ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ հայտնելով իր գոհունակությունը, որ Վիտալի Գրիգորյանցը մշտապես եւ անսակարկորեն զորակցում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ծրագրերին, ինչպես նաեւ աջակցում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի եւ Ուկրաինայի հայոց թեմերի առաքելության նվիրական գործին:

Հանդիսությանը գեղարվեստական հայտագրով հանդես եկավ Սբ. Գեղարդ վանքի երգչախումբը:

### Գերագույն հոգեւոր խորհրդի նիստ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սույն թվականի հուլիսի 6-7-ը գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով՝ նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցությամբ Հայաստանի եւ Սփյուռքի հոգեւորական եւ աշխարհական անդամների:

Օրակարգում քննության առնվեցին հայրենական եւ եկեղեցական կյանքին առնչվող հարցեր: Անդրադառնալով առաջիկայում նախատեսվող հոբելյաններին՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը էական նկատեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մասնակցությունը եղեռնի 90 եւ գրերի գյուտի 1600-ամյակների տարելիցներին նվիրված միջոցառումներին: Այս 2րջանակներում կարեւորվեց հոգեւոր, եկեղեցական բովանդակությամբ մշակութային, հրատարակչական, բնապահպանական եւ զանազան այլ միջոցառումների անցկացումը: Գերագույն հոգեւոր խորհուրդը գոհունակությամբ ընդունեց նաեւ երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի վախճանումի 10-րդ տարելիցին նվիրված հանդիսությունների կազմակերպման ընթացքի մասին համապատասխան հանձնախմբի զեկույցը:

Ժողովը քննության առավ նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնադրության, ծխական համայնքների վերակազմակերպման, եպիսկոպոսաց ժողովի գումարման, ինչպես նաեւ թեմական, կազմակերպական եւ այլ հարցեր:

Գերագույն հոգեւոր խորհուրդը գոհունակությամբ ընդունեց նաեւ Նորին Սրբության Հարավային Ամերիկայի հայոց թեմեր, Ֆինլանդիա եւ Մեծ Բրիտանիա կատարած միջեկեղեցական եւ հովվապետական այցերի արդյունքների մասին հաղորդումը:

Տես՝ էջ 2

1-15 հուլիսի

# ՏՈՆԵՐ, ՍՈՒՐԲԵՐ, ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ



**Հուլիսի 1-ին Սուրբ թարգմանիչների՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի տոնն էր:**

Այս երկու մեծագույն սրբերի նախաձեռնությամբ եւ ղեկավարությամբ է Աստվածաշունչը թարգմանվել հայերեն նախ ասորերենից, ապա հետագայում թարգմանությունն ավելի է ճշգրտվել հունարեն բնագրերի համեմատությամբ։ Եկեղեցին լուրջ քննությունից հետո հաստատել է Աստվածաշնչի կանոնը եւ Սուրբ Գրքի անաղարտությունը դարեդար պահելով՝ հասցրել է մինչեւ մեր օրերը։ Այսօր, սակայն, որոշ աղանդներ ընդհանրապես աղավաղում են Աստվածաշնչի շատ նախադասություններ՝ իրենց հետեւորդներին խաբելու համար։ Օրինակ՝ Եհովայի վկաները իրենց հրատարակությամբ Աստվածաշնչում, այն իրենց սխալ վարդապետությանը հարմարեցնելու նպատակով, բազմաթիվ կոպիտ, միտումնավոր սխալներ են թույլ տվել եւ հատկապես փոփոխել են Ավետարանների այն բոլոր հատվածները, որոնցով շեշտվում կամ ակնարկվում է Քրիստոսի աստվածությունը։ Դեմ լինելով Սուրբ Հոգու աստվածությանը՝ նրանք նաեւ սրան վերաբերող հատվածներն են փոփոխել եւ շարունակում են *Սուրբ Հոգի*-ն գրել փոքրատառով, իսկ *սատանա* բառը միշտ գրում են մեծատառով։ Այս հանգամանքն արդեն որոշակի բան ասում է այդ աղանդավորների մասին։ Մինչդեռ Հայ Առաքելական Եկեղեցու թարգմանությունը՝ կատարված Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի ու նրանց աշակերտների կողմից, ողջ աշխարհում ճանաչված է որպես թարգմանությունների թագուհի։

**Հուլիսի 3-ին Սուրբ Տրդատ թագավորի, Աշխեն թագուհու եւ Տրդատի քույր Խոսրովիդուխտի տոնն էր:**

Բոլորս էլ գիտենք, որ Տրդատ թագավորի անվան հետ է կապված Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակումը 301 թ.։ Այս սրբերն անձամբ մասնակցել են Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի շինարարությանը։ Տրդատի դարձի պատմությունը ցույց է տալիս, որ Աստված նույնիսկ ամենամեծ մեղավորին՝ նրա զղջման եւ ապաշխարության դեպքում ընդունում է եւ սիրով պարուրում։ Տրդատ թագավորը, իր ազատ կամքով ընտրելով բարին, այդուհետ ճշմարիտ քրիստոնյայի կյանք վարեց։ Զարմանալի է Աստծո գործունեությունը։ Հովհան Ոսկեբերանն ասում է, թե որպեսզի մարդիկ իմանան, որ ամեն ինչ պատահականություն չէ, Աստված Իր փառավոր գործերն անում է Իր թշնամիների միջոցով, ինչպես օրինակ Պողոս առաքյալի միջոցով դարձի բերեց քրիստոնյաներին եւ Տրդատ թագավորի միջոցով, անշուշտ նաեւ Գրիգոր Լուսավորչի նախանձախնդիր գործունեությամբ, քրիստոնյա դարձրեց ողջ հայոց երկիրը։ Ոսկեբերանը նշում է, որ սա վերաբերում է նաեւ առանձին մարդուն. եթե մարդը Աստծո պատվիրանների համաձայն է ապրում, սակայն նաեւ թշնամիներ ունի իր անձնական կյանքում, Աստված ի վերջո այդ մարդուն փառավորելու է իր թշնամիների միջոցով, ինչպես որ տեսնում ենք Հովսեփի կյանքի պատմությունից։

**Կիրակի՝ հուլիսի 4-ին, Աստվածածնի տուփի գյուտի տոնն էր:**

Աստվածածնին պատկանող այդ փոքրիկ տուփը նախապես եղել է Գալիլիայում՝ մի կնոջ մոտ, եւ հիվանդներին բժշկություն է պարգեւել։ Այնուհետեւ երկու հույն իշխաններ տուփը բերել են Կ. Պոլիս, որտեղ այն զետեղվել է Սուրբ Աստվածածին եկեղեցում։ Մեր Եկեղեցին այն տոնում է 18-րդ դարից սկսած՝ Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի կարգադրությամբ։

Սրբերի կյանքի պատմություններից տեսնում ենք, որ նրանք բոլորն էլ, առաքինի ապրելով, նաեւ առաքինի մահ են ունեցել՝ արժանանալով հավիտենական կյանքի։ Եվ մենք ինքներս, սա իմանալով, մեր ազատ կամքով ընտրենք միայն բարին՝ միշտ հիշելով եկեղեցական հեղինակներից մեկի իմաստուն խոսքերը. «Առաքինի մահը գանձ է, եւ յուրաքանչյուր ոք բավականաչափ հարուստ է, որպեսզի ձեռք բերի այն»։

Այս շաբաթվա կարեւոր հիշատակումներից է՝

**Քրիստոսի 12 առաքյալների եւ Սուրբ Պողոս առաքյալի տոնը (հուլիսի 10):**

Իր հրաշափառ Հարությունից հետո Քրիստոս առաքյալներին դարձրեց եպիսկոպոսներ, իսկ Ձիթենյաց լեռը հանելով եւ նրանց օրհնելով՝ կաթողիկոսական իշխանություն տվեց, այսինքն՝ դարձրեց կաթողիկոսներ։ Այս բոլոր հովվական շնորհները առաքյալները փոխանցեցին ձեռնադրությամբ։ Նորկտակարանյան բազմաթիվ համարներ ցույց են տալիս, որ այս ձեռնադրության միջոցով են փոխանցվում այն լիազորությունները, որոնք Քրիստոս տվեց առաքյալներին (Գործք Զ 6, Ը 17-19, Թ 12,17, ԺԳ 3, ԺԴ 22, ԺԹ 6, Ա Տիմոթ. Դ 14, Ե 22, Բ Տիմոթ. Ա 6 եւ այլն)։ Հետեւաբար վերջերս առաջ եկած աղանդավորական հովիվները կամ երեցները ինքնակոչ են եւ մարդկանց տանում են մոլորության ճանապարհներով։ Ճիշտ է, Քրիստոսից հետո այսպես առանձին սկսեց գործել նաեւ Պողոս առաքյալը։ Նա նաեւ եպիսկոպոսներ ձեռնադրեց իր հիմնած եկեղեցիների համար, եւ նրա գործունեությունն այնքան արդյունավետ էր, որ հետո նրան սկսեցին նույնիսկ կոչել 13-րդ առաքյալ։ Հետեւաբար, նրանց ձեւավորած Եկեղեցուց դուրս որեւէ մեկը երբեք չի կարող օրինական քահանա լինել։ Եկեղեցին այս իմաստով որեւէ կազմակերպություն կամ մասնավոր ուսումնական հաստատություն չէ, որպեսզի պետության կողմից լիազորություն ստանալով՝ օրինական համարվի եւ գործի։ Ուստի, եթե իրոք ցանկանում ենք փրկության արժանանալ, պետք է լավ մտածենք, թե ում ենք հետեւում եւ ուր ենք գնում։ Այսօրվա բոլոր աղանդավորներն իրենց համարում են Աստծուց ներշնչված եւ Նրա զորությամբ գործող։ Սակայն շատ հաճախ որոշակի զգացողություններ եւ տարբեր ոգեւորություններ լինում են պարզապես մարդկային զգացմունքներից ու տրամադրվածությունից, եւ ահավոր բան է, երբ այդպիսի վիճակում գտնվող մարդն իրեն անմիջապես Սուրբ Հոգով ներշնչված է համարում։ Այս դեպքում արդեն մարդ աստվածացնում է իրեն եւ իր զգացմունքները, իսկ սրա մեջ ահավոր վտանգ կա, որին ենթարկվում են աղանդավորների կողմից մոլորված բազմաթիվ մարդիկ։ Այդպիսին են հատկապես Հայաստանում տարածված՝ հայտնություններ ստացող կամ լեզուներ խոսող աղանդների անդամները։ Այսօր Քրիստոսի առաքելահաստատ Սուրբ Եկեղեցին գուցե շատ բանով է տարբերվում առաջին քրիստոնյա առաքելական համայնքից, որովհետեւ ժամանակների բերումով շատ բան առաջ է ընթացել, զարգացել է եւ փոփոխվել, բայց մի բանում մենք հաստատ ենք եւ միշտ էլ նույնն ենք մնալու առաքելական առաջին շրջանի քրիստոնեական համայնքի հետ. դա այն համոզումն է, որ Քրիստոսից դուրս փրկություն չկա, որ առանց Քրիստոս Աստծո մարմնի եւ արյան հաղորդության, ըստ Ավետարանի, մարդը չի կարող հավիտենական կյանք ունենալ, եւ, ինչպես Պողոս առաքյալն է ասում կորնթացիներին ուղղված նամակում, մենք չենք կարող խմել ե՛ւ աստվածային բաժակը, ե՛ւ սատանայական բաժակը (Ա կորնթ. Ժ 20)։ Մինչդեռ բազմաթիվ աղանդներ, պատճենելով քրիստոնեական առաջին համայնքի ձեւերը, շեղվում են հավատքի ամենագլխավոր հարցերում։ Շնորհապաշտության մոլությամբ տարված աղանդները շեշտը դնում են շնորհների երեւելի դրսեւորման վրա՝ մոռանալով Պողոս առաքյալի խոսքերը. «Եթե խոսեմ մարդկանց լեզուները եւ հրեշտակներինը, բայց սեր չունենամ, կնմանվեմ մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ ղողանջում են։ Եվ եթե մարգարեություն անելու շնորհ ունենամ եւ հասկանամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտությունը, եւ եթե ունենամ ամբողջ հավատը՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ, *բայց սեր չունենամ, ոչինչ եմ*» (Ա Կորնթ. ԺԳ1-3)։ Որոշ աղանդներ էլ բացահայտորեն մերժում են Քրիստոսի աստվածությունը։ Օրինակ՝ ըստ մորմոնների՝ Քրիստոս ոչ միայն մարդկանց նման է, այլեւ բնությամբ նույնն է եւ ունի միայն մեկ՝ մարդկային բնություն։ Մորմոնները սիրում են Քրիստոսին անվանել՝ մեր սիրելի եղբայրը։ Եհովայի վկաների աղանդը եւս մերժում է Քրիստոսի աստվածությունը, եւ չնայած աղանդավորները շատ են գործածում *Քրիստոս* անունը եւ այն հաճախ են գրում իրենց թերթիկների ու գրքույկների էջերին, այնուամենայնիվ, խեղաթյուրված կերպով են ներկայացնում Աստվածաշնչի տվյալները՝ մոլորեցնելով հիմնականում սկզբնապես Աստվածաշնչից անտեղյակ մարդկանց։ Այս աղանդները զուրկ են մնում Սուրբ Հաղորդությունից, ուրեմն նաեւ, ըստ Քրիստոսի խոսքի, հավիտենական կյանքը ժառանգելու հնարավորությունից (Հովհ. Զ 54-56)։ Ճշմարիտ Եկեղեցուց անջատված մի շարք ուղղություններ չեն ընդունում, որ Հաղորդության հացն ու գինին Քրիստոս Աստծո ճշմարիտ մարմինն ու արյունն են, այլ դա համարում են մի պարզ խորհրդանիշ՝ ասելով, որ մարդկանց փրկում է միայն Ավետարանի բարի լուրի քարոզությունը։ Սա նույնն է, թե ծարավ մարդուն փորձենք հագեցնել ջրի մասին տեղեկություններով։ Քրիստոս հայտնում է, որ ցորենն ու որոմը, այսինքն՝ բարին եւ չարը միասին են լինելու, եւ ասում, որ որոմը քաղելիս՝ գուցե ցորենը վնասեք (Մատթ. ԺԳ 29)։ Այս խոսքերից երեւում է, որ երբ կարելի է որոմը քաղել՝ ցորենը չվնասելով, պետք է քաղել եւ դեն նետել։ Նոր օրենքում Պողոսն ասում է՝ փոքր խմորը խմորում է ողջ զանգվածը, որից հետո ասում է, թե չարիքը ձեր միջից վերացրեք (Գաղատ. Ե 9,



Ա Կորնթ. Ե 6-7)։ Այդ իսկ պատճառով եկեղեցական հայրերը նզովքների եւ բանադրանքների են ենթարկել ճշմարիտ հավատքից շեղվողներին։ Հաճախ ինքը Եկեղեցին **բանադրում եւ նզովում է հանցավորներին**։ Բանադրանքը եկեղեցական պատիժ է, որ տրվում է հանդիմանական խոսքով ենթակային ուղղության բերելու համար։ Իսկ նզովքը կարդացվում է անուղղելի եւ անհույս հերետիկոսների վրա, որպեսզի մյուսները, սա տեսնելով, հեռու մնան այդ հիվանդությունից։ Այսօր աղանդավորական բոլոր ուսմունքները եկեղեցական նզովքի տակ են։ Ճիշտ է, որ աղանդավորական կազմակերպությունների մեջ եւս կարելի է շատ բան իմանալ Քրիստոսի մասին, սերտել Աստվածաշունչը (իհարկե՝ ոչ ճիշտ ձեւով), նույնիսկ Աստվածաշնչից անգիր սովորել բազմաթիվ համարներ՝ Քրիստոսի եւ հավատքին առնչվող շատ հարցերի վերաբերյալ։ Սակայն այլ է Քրիստոսի մասին իմանալը եւ այլ է Քրիստոսին իմանալը։ Քրիստոսի մասին մենք իմանում ենք Աստվածաշնչից, իսկ Քրիստոսին իմանում ենք այն ժամանակ, երբ սրտին դիպչում է Քրիստոսի Հոգին։ Հենց այսպես է, որ ե՛ւ առաքյալները, ե՛ւ քրիստոնեական բոլոր սրբերը գիտեին Քրիստոսին։ Եվ այս իմաստով Քրիստոսին երբեք չի կարող իմանալ նա, ով հեռու լինելով ճշմարիտ Եկեղեցուց՝ ընթանում է շեղված ճանապարհներով։

*Տեր Արամ քհն. ՄԱԿԱՐՅԱՆ*

## ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Սեմինար՝ Քահանայից լսարանում

Տես՝ էջ 1

Օրերս Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանի Կլոր սեղան էկումենիկ հիմնադրամը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Քահանայից լսարանում կազմակերպել էր սեմինար՝ լսարանում ուսանող ապագա հոգեւորականների համար: Սեմինարի նպատակն էր հարստացնել ապագա հոգեւորականների գիտելիքները ՁԻԱՀ-ի մասին եւ նրանց փոխանցել Ռուս Ուղղափառ Եկեղեցու փորձը՝ այդ հիվանդությամբ տառապող մարդկանց օգնության հարցում:

Երկօրյա սեմինարին զեկուցումներով հանդես եկան ԵՀԽ Հայաստանի Կլոր սեղան էկումենիկ հիմնադրամի ղեկավար Կարեն Նազարյանը, «Արմենիկում» կենտրոնի ներկայացուցիչ, լաբորատոր հետազոտական խմբի ղեկավար Տիգրան Դավթյանը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու արտաքին կապերի բաժնի աշխատակցուհի Մարգարիտա Նեյուբովան, բժիշկ Իրինա Կրուժկովան եւ հոգեբան Մարինա Նիկիտինան՝ Մոսկվայից:

Ինչպես նշեց Մարգարիտա Նեյուբովան, ընդունված բարոյական չափանիշների արժեզրկման մեր ժամանակներում եկեղեցու դերը բարոյական արժեքների վերականգնման հարցում անգնահատելի է: Մյուս կողմից՝ ՁԻԱՀ-ի շատ վարակակիրներ, անբուժելի հիվանդության փաստին բախվելով, հաճախ վերափոխում են իրենց կյանքը եւ դիմում Եկեղեցու օգնությանը: Այս առումով Ռուս Ուղղափառ Եկեղեցին ՁԻԱՀ-ով հիվանդների հոգեւոր եւ բարոյական աջակցության որոշակի փորձ ունի արդեն եւ պատրաստակամ է կիսել այն այլ Եկեղեցիների հետ:

«Արձագանքելով Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանի Կլոր Սեղան Էկումենիկ հիմնադրամի համագործակցության ծրագրին՝ մեր ռուս հավատակիցները քրիստոնյային վայել պարտքի գիտակցումով, սիրով եւ անշահախնդրությամբ եկան Հայաստան եւ դասախոսեցին մեր ապագա հոգեւորականների համար, - նշեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանի Կլոր սեղան էկումենիկ հիմնադրամի կոորդինատոր Կ. Նազարյանը, - վստահ եմ, որ այս սեմինարի ընթացքում ձեռք բերած գիտելիքները մեր ապագա հոգեւորականներին պետք կգան իրենց հոգեւոր եւ այդչափ պատասխանատու ծառայության ժամանակ»:

Դասընթացի ավարտին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սեմինարի կազմակերպիչներ ԵՀԽ Հայաստանի Կլոր սեղան էկումենիկ հիմնադրամի համակարգող պրն. Կարեն Նազարյանին եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու արտաքին կապերի բաժնի աշխատակցուհի Մարգարիտա Նեյուբովային:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց ԵՀԽ Հայաստանի Կլոր սեղանի գործունեությունը՝ կարեւորելով Եկեղեցիների միջեւ նման կապերի հաստատման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում քույր Եկեղեցիներին՝ փոխանցելու միմյանց տարբեր ոլորտներում իրենց փորձառությունը։

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

## ԶԱՔԱՐԻԱ Ա ՁԱԳԵՑԻ (855-876)

Զաքարիա Ա Ձագեցի կաթողիկոսի ընտրությունը տեղի ունեցավ երկրի համար բարդ պայմաններում: Բուղան, որ ուղղամտությամբ բոլորովին աչքի չէր ընկնում, երկրի մեծամեծներին կալանելով ու Սամառա ուղարկելով չբավարարվեց եւ հատուկ հրավերներով իր մոտ կանչեց մնացյալ իշխաններին, որոնք ինչ-ինչ զիջողությունների գնալով՝ արաբ զորավարին կտրուկ գործելու առիթ չէին տվել եւ հույս ունեին ստանալ Բուղայի խոստացած արքունի պարգեւները: Շատերը միամտաբար եկան Բուղայի մոտ եւ անգամ պատիվների արժանացան, որը քաջալերեց մյուսներին եւս ներկայանալու արաբ զորավարին: Համոզվելով, որ գործնականում հայոց բոլոր իշխանները հավաքված են իր ճամբարում, Բուղան նենգորեն կարգադրեց իրենց վրաններում ննջող հայ իշխաններին շղթայել եւ միացնել արդեն բանտարկվածներին: Դրանց մեջ էին Քուրդիկի որդի Գրիգոր Մամիկոնյանը, Գրիգոր Սյունին, Բաբեկին ձերբակալող Սմբատի որդի Սահլ Բագրատունին, Վայոցձորի իշխան Վասակը, Փիլիպե Սյունին, Ներսեհ Գարիթայանից իշխանը, Ատրներսեհ Խաչենցին, Եսայի Աբումուսեն եւ ուրիշներ: Սմբատ Աբլաբաս սպարապետը բռնություններին չենթարկվեց, սակայն որպես գործակից եւ խալիֆի շնորհներին արժանացած մարդ՝ հրավիրվեց իր հետ մեկնելու Սամառա՝ իբրեւ թե արքունի պարգեւներ եւ պատիվներ ստանալու: Սպարապետությունը հանձնվեց նրա որդի Աշոտ Բագրատունուն, իսկ որպես հարկահավաք թողնվեց Իբրահիմ անունով մի զորապետ, որը ենթարկվելու էր Ատրպատականի մեծ ոստիկան Մահդիին: Հենց այս ժամանակ էլ տեղի ունեցավ Հովհաննես Օվայեցու մահը, ուստի Սմբատ Բագրատունին մինչեւ Արաբիա մեկնելը որոշեց կազմակերպել կաթողիկոսի ընտրությունը, որի համար եպիսկոպոսական ժողով հրավիրեց, որը գումարվելով Երազգավորս կամ Շիրակավան քաղաքում՝ հայոց հայրապետ ընտրեց եւ ձեռնադրեց Զաքարիային, որը Կոտայք գավառի Ձագ գյուղից էր: Դրանից հետո ստանալով նորընծա կաթողիկոսի օրհնանքը՝ ճանապարհ ընկավ Արաբիա՝ հուսալով արժանանալ արքունի խոստացված պարգեւներին:





Զաքարիա Ա Ձագեցու կաթողիկոսության հետ կապված հարկ է նշել, որ նույն օրն արժանացավ սարկավագության, քահանայության եւ կաթողիկոսության: Հայտնի է, որ կաթողիկոսները սովորաբար ընտրվում էին եպիսկոպոսներից, եւ բացառիկ դեպքերում էր, որ վերջինները կարող էին հանդուրժել հայոց հայրապետի ընտրությունը իրենց դասից դուրս գտնվող անձանցից: Թե ինչ առանձնահատուկ արժանիքների համար նա դարձավ կաթողիկոսության թեկնածու, մնում է հանելուկ, քանի որ աղբյուրները նրա նախորդող գործունեության մասին ոչինչ չեն հայտնում: Ենթադրել, թե եպիսկոպոսները հրաժարվեցին՝ պատասխանատվությունից խուսափելու համար, հազիվ թե համապատասխանում է ճշմարտությանը, ինչպես ճիշտ գրում է Մաղաքիա Օրմանյանը, քանի որ նրանք ոչ շատ երկչոտ էին եւ ոչ էլ այդչափ խոնարհամիտ: Ինքը՝ Զաքարիան, նախարարական ծագում չուներ եւ սովորական գյուղացի էր Ձագ գյուղից: Ուստի պետք է ենթադրել, որ մինչեւ ընտրությունը նա կաթողիկոսարանում պաշտոնավարել է, քաջահմուտ է եղել հայրապետանոցի խնդիրներին, որը եւ հիմք է դարձել ընտրության ու ձեռնադրության համար: Իհարկե, հաշվարկից դուրս չպետք է թողնել ամենակարեւոր իրողությունը, որ նրա ընտրությունը կատարվել էր Սմբատ սպարապետի ցանկությամբ եւ հզոր ազդեցությամբ: Կյանքը ցույց տվեց, որ ընտրությունը ճիշտ էր կատարված, եւ Զաքարիա կաթողիկոսն արդարացրեց ժողովրդի, հոգեւորականության եւ նախարարության սպասելիքներն ու հույսերը:

Մինչ Զաքարիան հովվապետում էր, Սամառայի բանտերը լեցուն էին հայ իշխաններով, որոնց մեջ հայտնվեց նաեւ Սմբատ Աբլաբաս սպարապետը: Նրանց մեջ առաջինը եղել էր Բագարատ Բագրատունին, որը կալանավորվել ու Արաբիա էր բերվել Յուսուփի կողմից եւ ուրացությամբ կարողացել էր իր կյանքը փրկել: Իսլամացել էր նաեւ Վասակ Արծրունին, որը կամովին փութացել էր Սամառա եւ ընդունել մահմեդականություն՝ հույս ունենալով արժանանալ պատիվների: Բուղայի ետ կանչվելուց հետո Մութավաքիլ խալիֆը դատ կազմակերպեց, որի ժամանակ, երբ հարցեր ինչեցին բանտարկյալների ինքնության մասին, հայ իշխանները պատասխանեցին, թե իրենք խալիֆին անծանոթ մարդիկ չեն եւ ոչ էլ ապստամբել են նրա դեմ: Խալիֆը հիշեցնում է, որ նրանք մեծ վնասներ են տվել, ուստի ինքը նրանց կխնայի, եթե իսլամանան: Բանտարկյալներից Արծրունյաց Յովհաննես եպիսկոպոսը եւ նշանավոր Գրիգոր քահանան բոլորի անունից հայտարարում են, որ իրենք հաստատ են քրիստոնեության հարցում՝ միաժամանակ նշելով, որ հարյուր տասնմեկ մարգարեները, բացառությամբ մեկի, վկայել են քրիստոնեության համար: Դրան ի պատասխան՝ Մութավաքիլը սպառնալիքներ է տալիս, եւ նախարարները հոգեպես տկարանում են եւ Բագարատ Բագրատունու ու Վասակ իշխանի հորդորներով՝ կեղծ ուրանում: Սակայն իսլամացվելուց հետո էլ նրանք չեն կարողանում հայրենիք վերադառնալ եւ մնում են աքսորականի վիճակում: Սակայն բոլորը չէ, որ ընդունեցին մահմեդականությունը, չնայած դրանց թիվը մեծ էր: Ուտիացվոց իշխան Ստեփանոս Սեւորդին, որին ժողովուրդը Կոն մականունն էր տվել, չկամեցավ անգամ առերես իսլամանալ եւ երկարատեւ խոշտանգումներից հետո գլխատվեց 855 թվին:

*Շարունակությունը՝ էջ 4*

# ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

## ՔԱՐՈԶ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

*Սկիզբը՝ թիվ 11*

Այսպես է սուրբ եւ մաքուր հոգիների վախճանը. նրանք ուրախությամբ ընթանում են դեպի պսակները, ազատվելով բանտից եւ խավարային մարմնից՝ իբրեւ խավար բանտից, տեսնում են լույսը: Հոգիները, որոնք բաժանվում են մարմնից, լույսի եւ երանելի հանգստի մեջ են, սակայն սպասում են Քրիստոսի մեծ հարսանիքին եւ վախճանի օրվան, ինչպես ասում է Դավիթը. «Քեզ սպասում են արդարները, մինչեւ որ հատուցես»:

Իսկ սուրբերի սրբազան մարմինները լուծվում են հողին, նախ՝ որպեսզի վճարեն դատապարտության պարտքը, ինչպես Ադամին ասվեց. «Հող էիր եւ հող դարձիր»: Դարձյալ՝ քանի որ հողը մեր մայրն է առավել, քան մյուս տարրերքները. ծածկում է մեր, ինչպես մայրը՝ մանկան գարշությունները: Մարմինը հող է դառնում, մինչ հոգին մնում է անապական եւ անփոփոխ, հետո մարմինը, նրա հետ միավորվելով, անապական ու անփոփոխ պիտի մնա: Դարձյալ՝ մարմինը հողում է հանգչում, հոգին՝ հոգիների կայանում, իսկ հարության ժամանակ միասին պսակներ պիտի ընդունեն ու փառավորվեն: Դարձյալ՝ մարմինը հող է դառնում, մինչեւ ապականացու տարերքներն անապականություն ստանան՝ ըստ Պողոսի այն խոսքի, թե՝ «Արարածներն իրենք էլ ազատվեն ապականության ծառայությունից՝ Աստծո որդիների փառքի ազատության հասնելու համար», ապա եւ անապական մարմինը անփոփոխ հոգուն միավորվի եւ ապրի հավիտյան. այնժամ մարդու ապականացու մարմինը կլինի անապական եւ նման Քրիստոսի անապական մարմնին, եւ կլինեն հոդավորված եւ միավորված՝ «անդամներ՝ Նրա անդամներից եւ մարմին՝ Նրա մարմնից», որովհետեւ Իրեն հավատացողներին խոստացավ այս՝ որ անապական մարմնով եւ անփոփոխ հոգով նման կլինեն Իրեն:

Այսքանը սուրբերի հոգիների եւ մարմինների մասին: Այժմ անսուրբ՝ անմաքուր եւ մեղավոր հոգիների մասին, ինչպիսին չմկրտվածներն են, ուրացողները, մեղքերի ախտերի մեջ գտնվողները եւ այլք, որոնց մասին սկզբում խոսեցինք: Ոմանք ասում են, թե մարդու հոգին անմահ չէ, այլ մահկանացու եւ լուծելի, ինչպես անասուններինը. մարմնի լուծվելու հետ միասին շունչը եւս լուծվում է օդին եւ կորչում: Սակայն նրանք չգիտեն, որ հոգին անմարմին էություն է եւ Աստծո պատկերը, իսկ անմարմին էությունն ու Աստծո պատկերը մահ չունի: Ոմանք, ինչպես Պլատոնը, ասացին որ հոգին անմահ է, սակայն հող դարձած մարմինը հարություն չունի, քանի որ պատշաճ չէ, որ մարմինը, որ մահկանացու է եւ հողի պատկեր, լինի անապական եւ մշտնջենավոր հոգու հետ: Նրանք չգիտեն նաեւ Քրիստոսի խորհուրդը, Որը «եղավ անդրանիկը մեռելների միջից», անապական մարմնով հարություն առավ եւ մեր հարությունը ցույց տվեց Իր սուրբ մարմնով: Իսկ ոմանք էլ ասում են, որ հարություն լինելու է, բայց ոչ նույն, այլ ուրիշ մարմնի, ասում են, որ անապական հողից ուրիշ մարմին պիտի ստեղծվի, որը եւ հարություն պիտի առնի հոգու հետ: Սրանք անիրավություն են տարածում՝ ասելով, թե ուրիշ մարմին պիտի հանգստանա մաքուր հոգու, եւ ուրիշ մարմին պիտի տանջվի անմաքուր հոգու հետ:

Իսկ ոմանք, ինչպես հերձվածողներից ոմն Պապիաս եւ Ապողինար, ասում են, թե նույն մարմինն ու հոգին պիտի հարություն առնեն, նաեւ մարմնավոր հեշտություններ եւ փափկություն, ինչպես այստեղ՝ կերակուր, ըմպելիք [պիտի լինեն], եւ չգիտեն Տիրոջ հրամանը, որն ասում է. «Հարության ժամանակ ո՛չ կին են առնում եւ ո՛չ էլ մարդու գնում, այլ կլինեն, ինչպես հրեշտակները, անմահ եւ անապական մարմնով, քանի որ հարության որդիներ են»: Մենք՝ ուղղափառներիս դասերս, խոստովանում ենք, որ հոգին անմահ է, որ նույն մարմինը պիտի հարություն առնի եւ հրեշտակներին հավասար հոգեւոր կյանք [պիտի լինի]: Եվ ինչպես սովորական են այստեղ բոլոր մարդկանց՝ հոգու եւ մարմնի միությունը՝ բանական մարդ լինելը, այնպես էլ այնտեղ հարությունն ու անմահությունը սովորական են արդարների ու մեղավորների համար: Իսկ երբ մեղավոր հոգին հասնում է վախճանին տրտմությամբ եւ ակամա, ինչպես սպանդի տարվող անասուն, այնժամ ա՛յլ աչքով՝ այսինքն մտքով, տեսնում է նախ արդարների երանական կյանքը, որից ինքը զրկվեց իր մեղքերի պատճառով: Եվ ապա տեսնում է իր հատուցումն ու գեհենի տանջանքները, եւ դառնացած հոգոց հանում, այս ու այն կողմ շրջում իր երեսը եւ թաքնվել չի կարողանում, եւ այդպես, մշտապես տեսնում է ցավերը՝ իրեն մերձ, եւ իր չար գործերը՝ իրենից անբաժանելի մինչեւ հարության օրը, երբ պիտի ընդունի հավիտենական տանջանքների անվերջ պատիժների վճիռը:

Սակայն այլ է մեղավորի մահը, եւ այլ է արդարի մահը, որովհետեւ արդարի մահը, ինչպես մարգարեն է ասում, «պատվական է Տիրոջ առջեւ», եւ՝ «Բազում նեղություններ են սպասում արդարներին. ամենից փրկում է նրանց Տերը» եւ այլն:

Իսկ մեղավորի մահը չար է, քանի որ չարությամբ ապրած հոգին չարությամբ էլ մեռնում է, քանի որ չար կյանքից գնում է չար տանջանքների մեջ եւ փրկության ոչ մի հույս չունի: Ո՛չ օգնական ունի, ո՛չ բարեխոս, ո՛չ ողորմություն եւ ո՛չ այսպիսի այլ բան, որ նրան [փրկության] արժանավոր դարձնի: Այլեւ երբ չար հոգին բաժանվում է չար մարմնից, օդային չար ոգիները, ընդառաջ գալով, փակում են նրա ճանապարհը, որպեսզի իր բաժինը ճանաչի եւ տանջանքներ ընդունի, որը պիտի լինի աշխարհի վախճանին: Մինչ հրեշտակը սաստում է նրանց, եւ վերցնելով՝ տանում հոգիների կայան, նրանց շրջապատում են հրապարակի կոծողներն ու լաց լինողները, իսկ նա ցավով, տրտմությամբ եւ հեծությամբ մնում է խավարային բանտում ուրիշ խավարասեր հոգիների հետ, որովհետեւ չունի շնորհների զգալի լույսը եւ տեսնում է պատիժները՝ իրեն մերձ: Եվ դառնացած, տրտմած եւ սարսափած սպասում է, որ այն մեծ առավոտը ծագելիս կրի պատիժներն ըստ իր գործերի: Եվ ինչպես արդարները դեռեւս չեն ընդունել իրենց կատարյալ փառքը, այնպես էլ մեղավորները չեն ստացել իրենց կատարյալ տանջանքները, այլ երկուսն էլ իրենց հոգիներում մերձ են տեսնում այն, ինչ հարության օրը պիտի ստանան կատարյալ անձով՝ հոգով եւ մարմնով: Ինչպես ասում է ավետարանիչը. «Կլսեն Աստծո Որդու ձայնը եւ դուրս կգան. ովքեր բարի գործեր են արել, կյանքի հարության համար, իսկ ովքեր չար գործեր են արել, դատաստանի հարության համար»:



Իմաստուն եւ հիմար կույսերի առակում իմաստունները, որ պատրաստ ունեին իրենց ճրագները, Փեսայի հետ ներս մտան, իսկ հիմարները դրսում մնացին: Եվ երբ գա Դատավորը, այն ժամանակ կբաժանի ոչխարներին այծերից. դրանք արդարներն ու մեղավորներն են, որոնցից ոմանց կասի՝ եկե՛ք, իսկ ոմանց՝ [հեռո՛ւ] գնացեք:

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ

# ՅՈՀԱՆ ՎՈԼՖԳԱՆԳ ԳՅՈԹԵ



*Սկիզբը՝ թիվ 12-ում*

Գյոթեի հայտնի գործերից շատերը թարգմանվել են հայերեն դեռ 19-րդ դարում: Թարգմանական ավանդներով հարուստ հայ գրականությունը իրավամբ հպարտանում է «Ֆաուստի» մեկ տասնյակից ավելի թարգմանություններով, չհաշված առանձին պեսարանների փոխադրումները:

Գյոթեն մեծ նշանակություն էր տալիս թարգմանությանը՝ բարձր գնահատելով թարգմանչի գործը՝ իբրեւ հիացմունքի արժանի բանաստեղծական արվեստ,- նա լավ թարգմանությունը համարժեք էր համարում բնագրին, հակառակ Հովհ. Թումանյանի հայտնի դրույթին, թե թարգմանությունը նման է ապակու տակ դրած վարդի, այսինքն՝ զուրկ է բնագրի եւ սեփական բուրմունքից: Բազմաթիվ ասույթների կողքին ուշագրավ է նաեւ Գյոթեի հետեւյալ բանաստեղծությունը հենց թարգմանության մասին (գրված 1828 թ.).

**Նմանություն**

*Ես մի փունջ ծաղիկ քաղեցի դաշտում,*
*Մտքերով տարված՝ հետս բերի տուն.*
*Բայց իմ տաք ափից, տեսնեմ, թալկացած՝*
*Ծաղկաթերթերը խոնարհվել են ցած:*
*Դրեցի փունջը թարմ ջրամանում,*
*Եվ ա՜յ քեզ հրաշք՝ ո՛նց է թարմանում -*
*Կախ գլխիկները ձգվեցին վերեւ,*
*Կանաչ բող հագան ցողուն ու տերեւ.*
*Եվ բոլորն այսպես պայծառ են շողում,*
*Կարծես լինեին տնկած մայր հողում:*
*Այդպես հիացած ես ականջ արի,*
*Երբ երգըս հնչեց լեզվով օտարի:*

***(Թարգմ.՝ Ա. Մուշեղյանի):***

Իր ստեղծագործության մեջ Գյոթեն անդրադարձել է նաեւ հայոց Արարատին եւ հայերին: Մեծանուն բանաստեղծին խոր ակնածանք էր ներշնչում բիբլիական Արարատը: «Ես չէի զարմանա,- ասում է նա՝ գերմանացի նշանավոր բնախույզ եւ ճանապարհորդ Կարլ Ֆրիդրիխ Մարցիուսի հետ զրուցելիս,- եթե Արարատի վրա հայտնաբերեին առաջին մարդու գանգը»: Գյոթեի ծննդյան 200-ամյակի առթիվ Ստեֆան Ցվայգի կազմած մի հավաքածուում, տարիներ առաջ ես գտա եւ թարգմանեցի մի փոքրիկ բանաստեղծություն՝ «Թողեք, որ ես լամ», որի մեջ հիշատակվում է բանաստեղծին գիշերային լռության մեջ՝ անապատում ընկերակցող հայ քարավանապետը.

*Թողեք, որ ես լամ, գիշերն է պատել*
*Ինձ անապատում այս անծայրածիր.*
*Քնած են ուղտեր եւ ուղտապաններ,*
*Հայը լուռ, արթուն հաշիվ է անում.*
*Իսկ ես իր կողքին չափում եմ ուղին,*
*Որ բաժանում է ինձ Զուլեյխայից,*
*Համրելով տաղտուկ, ճամփա երկարող*
*Կեռմանները ձիգ:*

***(Գյոթե, Վայմարյան բնար, Երեւան, 1985, էջ 130):***

Գյոթեի բանաստեղծական հանճարը բացահայտվում է ոչ միայն նրա մեծածավալ քերթվածներում. նա նույնքան մեծ եւ խորաթափանց է նաեւ իր փոքրածավալ գործերում՝ բանաստեղծություններում ու բալլադներում:

Հայտնի է, թե ինչպիսի մեծ ազդեցություն է ունեցել երիտասարդ Գյոթեի գեղարվեստական ճաշակի զարգացման վրա գերմանացի բանահյուսագետ եւ ժողովրդական երգերի նրբաճաշակ մեկնաբան, ազգագրագետ Յոհան Գոտֆրիդ Հերդերը, որը բանաստեղծին հորդորում էր շարունակ բանականության եւ զգացմունքների անմիջականության: Դրա արդյունքը եղան Գյոթեի Զեզենհայմյան երգերն ու ոտանավորները. ավելին, 22-ամյա Գյոթեի հանդիպումն ու մտերմությունը Հերդերի հետ 1771 թ. Շտրասբուրգում՝ գերմանական գրականության պատմության մեջ համարվում է ոչ միայն Գյոթեի քնարերգության շրջադարձը, այլեւ առհասարակ գերմանական նոր պոեզիայի զարգացման սկիզբը թվագրվում է այդ տարեթվով:

Գյոթեն հաճախ է անդրադարձել ժողովրդական բանահյուսության մոտիվներին եւ դրանց հիման վրա ստեղծել երգեր ու բալլադներ: Այստեղ պետք է նշեմ, սակայն, որ Հովհ. Թումանյանի թարգմանությամբ շատ հայտնի «Վարդը» Գյոթեի բանաստեղծությունը չէ, այլ գերմանական ժողովրդական երգ՝ «Դաշտավարդը», որ 1778-79 թ. «բանավոր խոսքից» հրապարակել է նաեւ հայտնի բանահյուսագետ Յոհան Գոտֆրիդ Հերդերը իր կազմած եւ այլ լեզուներից թարգմանած «Ժողովուրդների ձայները երգերում» ժողովածուում՝ «Վարդիկը դաշտում» վերնագրով: Այդ երգը Գյոթեից հայերեն թարգմանել է նաեւ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը՝ «Դաշտի վարդը» (Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երեւան, 1964, էջ 158) վերնագրով, որը ավելի հարազատ է գերմաներեն բնագրին, քան Թումանյանի թարգմանությունը:

Ուշագրավ է, որ Գյոթեի «Անտառի արքան» բալլադի առաջին թարգմանությունը հայերեն կատարվել է դեռեւս նրա կենդանության օրոք՝ 1831 թ. վերջին, հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի ձեռքով, որն այդ ժամանակ Դորպատի համալսարանի ուսանող էր (Գյոթեի այս բալլադը հետագայում ունեցավ մի քանի նոր թարգմանություն՝ «Անտառի արքան», թարգմ.՝ Ջ. Բալուղյանի («Վարժարան», Թիֆլիս, 1894 թ. N 11, էջ 369).- Իշխան Մայրեաց (բանաստեղծություն), թարգմ.՝ Հովհ. Պալյանի («Բազմավեպ», 1904 թ. օգոստոս, հ. 8, էջ 378).- «Անտառի արքան», թարգմ.՝ Հակ. Հարությունյանի («Խորհրդային գրականություն», 1938, հ. 6-7, էջ 108-109):

Գետի, լճի, ծովի, ջրահարսների մասին խորհրդավոր շատ զրույցներ են հյուսվել գեղջուկների միջավայրում, որ գրավիչ գտնողների ու ոտանավորների նյութ են ծառայել բանաստեղծների համար: Դրանցից մեկն է Գյոթեի «Ձկնորսը» բալլադը, որի մեջ բանաստեղծն արտահայտել է բացառապես բնության թովչանքը. ջրից ելած կինը ափին նստած ձկնորսին իր հետեւից հմայում, տանում է ջրի հատակը.

**ՁԿՆՈՐՍԸ**

*Ջուրն էր թշշում, ջուրն էր ուռչում,*
*Ձկնորսն ափին նստած՝*
*Կարթին նայում էր, անրջում՝*
*Կուրծքը զովին տրված:*
*Նստել, ականջ է լուռ դնում,*
*Մեկ էլ ջուրը ճողփաց,*
*Ու հորձանքից դուրս է ելնում*
*Մի կին՝ մարմինը թաց:*
*Այսպես երգեց, խոսեց փերին.*
*«Նենգ հնարքով մարդոց*
*Ինչ ես թովում իմ ձագերին*
*Վերեւ՝ մահվան հնոց:*
*Թե իմանաս ոնց է խորքում*
*Խայտում ձկնիկն անվիշտ,*
*Դու էլ կիջնես եւ ընդերքում*
*Կապրես առողջ առմիշտ:*
*Մի՞թե արեւն ու հեզ լուսին*
*Չեն զմայլվում ծովում,*
*Ալեծածան լույս երեսին*
*Շքեղ արտացոլվում:*
*Քեզ չի՞ դյութում երկինքն անհուն,*
*Կապույտը՝ ջինջ շաղով,*
*Եվ դեմքդ չի՞ սքանչանում*
*Անմահական ցողով»:*
*Ջուրն էր թշշում, ջուրն էր ուռչում,*
*Կառչում էր մերկ ոտից.*
*Սիրտը կարծես դուրս էր թռչում*
*Սիրո վառ կարոտից:*
*Այսպես խոսեց, այսպես երգեց,*
*Ու մոլորվեց տղան.*
*Կես նա ձգեց, կես սա սկեց -*
*Աներեւույթ եղան:*



Երիտասարդ հասակում (1778) գրած իր այս գողտրիկ բալլադի մասին Գյոթեն արդեն առաջացած տարիքում (1823) արտահայտվել է բավական սառնությամբ՝ զարմանալով, որ նկարիչները նույնիսկ նկարել են բալլադը. «Նրանք նկարում են իմ «Ձկնորսը» եւ բոլորովին չեն մտածում, որ դա նկարչության համար պետքական չէ: Այդ բալլադում ես սոսկ արտահայտել եմ ջրի զգացողությունը՝ այն թովչանքը, որն ամառը մեզ լողանալու է ձգում. նրանում ուրիշ ոչինչ չկա: Մի՞թե դա հնարավոր է նկարել» (Էքերման, Զրույցներ Գյոթեի հետ, Երեւան, 1975, էջ 32):

«Երգիչը» (թարգմ.՝ Ա. Մուշեղյանի) բալլադում բանաստեղծը հայտնում է այն միտքը, թե արվեստագետի համար չի կարող լինել ավելի մեծ վարձատրություն, քան այն երգը կամ երկը, որ ինքն է ստեղծում.

*Շարունակությունը՝ էջ 7*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԶԱՔԱՐԻԱ Ա ՁԱԳԵՑԻ
## (855-876)

*Սկիզբը՝ էջ 3*

Չիսլամացան նաեւ Հովհաննես Արծրունյաց եպիսկոպոսը, Գրիգոր քահանան եւ Գրիգոր իշխանը՝ Արծրունյաց տնից: Նրանցից վերջինը մեծ չարչարանքներից հետո մահացավ բանտում եւ թաղվեց Բաղդադի քրիստոնյաների կողմից: Ուրացության չգնաց նաեւ Սմբատ Աբլաբաս սպարապետը, որը ինչ-որ չափով համագործակցել էր Բուղայի հետ եւ մասնակցել նրա մղած պատերազմներին: Խալիֆը, խիստ դառնացած, կամենում էր նրան տանջամահ անել, սակայն մահը եկավ՝ ազատելու դահիճների ձեռքից: Սպարապետը խոստովանողի անուն ժառանգեց: Նա նույնպես հողին հանձնվեց տեղի քրիստոնյաների կողմից՝ Դանիել մարգարեի գուբի վրա շինված եկեղեցում, ուր թաղվել էր, հավանաբար, նաեւ Գրիգոր Արծրունին: Ըստ երեւույթին, նա մահացավ 858 թվին, չնայած չի բացառվում, որ նա մահացել էր մինչեւ այդ ժամանակները: Նահատակվեցին նաեւ Բագարատ Բագրատունու քույր Հռիփսիմե իշխանուհին, որին պատիվներով հողին հանձնեցին հակոբիկները եւ Գրիգոր Մամիկոնյան իշխանը: Վերջինս կարողացավ հնար գտնել եւ բանտից փախչել ու վերադառնալ իր հայրենի Բագրեւանդ գավառը: Աշոտ սպարապետին խալիֆի կողմից հրաման եկավ նրան ձերբակալել, ուր էլ որ գտնվի: Գրիգոր Մամիկոնյանն ամրացավ Գաբեղյան գավառի Գազանածակք ամրոցում, սակայն տանջանքներից հյուծված լինելով՝ մահացավ վերադարձի յոթերորդ օրը: Աշոտ Բագրատունի սպարապետը, որ գիտեր ամեն ինչից օգուտ քաղել, առիթից օգտվելով՝ նրա գլուխը ուղարկեց Ատրպատականի Մահմեդ ոստիկանին՝ իբրեւ թե նրան գլխատել են Բյուզանդիա անցնելու փորձի ժամանակ: Լուրը նույնությամբ հասավ խալիֆին, որի կարգադրությամբ Բագրեւանդ գավառը եւ հինգ բյուր արծաթ՝ որպես պարգեւ, հանձնվեցին Աշոտ Բագրատունուն: Սա արդեն շատ ծանր հարված էր Մամիկոնյաններին, որոնք աստիճանաբար դուրս մղվեցին Հայաստանի մեծամեծ իշխանների շարքից:

Հալածանքների ենթարկվեց նաեւ Նանա անունով մի ասորի սարկավագ: Նա Հայաստան էր եկել ասորի Բուտես վարդապետի հանձնարարությամբ՝ որպես հմուտ աստվածաբան ու գիտնական, եւ կարողացավ Աշոտ Բագրատունուն ետ պահել քաղկեդոնիկ եպիսկոպոս Էպիկուրոսի ազդեցությունից: Էպիկուրոսը հայոց սպարապետի հրամանով հեռացվել էր նրա շրջապատից, իսկ Նանան, հավանաբար, մնացել էր Հայաստանում, գործակցել հայերի հետ եւ գերեվարվել էր Արաբիա՝ հայ կալանավորների հետ: Որպես նշանավոր դեմք՝ նա նույնպես ներկայացվեց խալիֆին, որը նրան առաջարկեց իսլամանալ: Սակայն Նանան ոչ մի կերպ չհամաձայնեց հավատուրաց դառնալ, տանջանքների ենթարկվեց բանտում, մինչեւ որ, հանգամանքների փոփոխվելով, ազատ արձակվեց:



Հանգամանքները փոխվեցին՝ կապված ներքին խառնակությունների ու հուզումների հետ, որոնք ցնցեցին Աբասյան տերությունը: Խալիֆները սկսել էին իրենց շրջապատել թուրքական ցեղերից վերցված թիկնապահներով, իսկ արքունական զորագնդերի հրամանատարներ էին կարգել թուրք իշխաններին: Իրենք՝ խալիֆները, Բաղդադից ոչ շատ հեռու գտնվող Սամառայի մոտերքը կառուցել էին Ջաֆարիե անունով մի պալատ, ուր զեխությունն ու պերճասիրությունն անցել էին ամեն մի սահման: Մութավաքիլ-Ալլահի հենարանը կազմում էին չորս թուրք հրամանատարներ՝ Վասըֆը, Բուղա-Քեբիրը, Բուղա-Սաղիրը եւ Բաղըրը: Դրանցից երկրորդը Հայաստան ուղարկված Բուղան էր: Թովմա Արծրունու հաղորդմամբ՝ Տփղիսի կառավարիչ Սահակ Իսմայելյանի կինը, որի հետ բռնությամբ ամուսնացել էր Բուղան, մշտապես բողոքում էր, թե ինքը արժանի է խալիֆի կին լինելու եւ ոչ թե Բուղայի: Բաղդադ հասնելուն պես՝ նա կարողանում է խալիֆին լուր տալ կատարվածի վերաբերյալ, եւ վերջինս, տեսնելով նրա գեղեցկությունը, իր համար վիրավորական է համարում կատարվածը, ուստի Բուղային պաշտոնավարության պատրվակով ուղարկում է Խորասան եւ ճանապարհին նրան սպանել է տալիս:

*Շարունակելի*

***ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# «ՄՇԱԿՈՒՅԹԸ ԲԱՆԱԿ Է»

*Տպագրության ընթացքի մեջ է Դ. Գասպարյանի «Երկնային շուշան. Ազգային մշակույթ եւ ազգային ինքնագիտակցություն» գիրքը: Ներկայացվող նյութն այդ հրատարակությունից է:*

Վերնագիրը Յակոբ Օշականինն է, գաղափարը՝ 20-րդ դարինը: Իսկ 21-րդ դարում այդ գաղափարը մշակույթի դերի գործնական նշանակությամբ դառնալու է ավելի իշխող: Ինչպես աշխարհի, այնպես եւ հայ ժողովրդի ամբողջ նախանցյալ պատմությունը նաեւ մշակութային պատերազմների ու ազդեցության գոտիների պատմություն է:

Մշակութային պատերազմ էր քրիստոնեության ընդունումը: Նոր վարդապետությունը՝ որպես գաղափարախոսություն, ժողովրդի գիտակցությունից իսպառ ջնջեց նույն այդ ժողովրդի հեթանոսական ժամանակների պատմությունը, դիցաբա-



նությունը, գիրն ու գրականությունը, ամբողջ մշակութային գոյածեւը: Մշակութային պատերազմ էր հայոց գրերի ստեղծումը: Յայոց Եկեղեցին առանձնացավ , ուստի հունարենն ու ասորերենն այլեւս Յայոց Եկեղեցու լեզու չէին կարող լինել: Մշակութային պատերազմներ էին Զվարթնոց տաճարի կառուցումը, «Սասնա ծռեր» ժողովրդական վիպերգի ստեղծումը, Նարեկացու «Մատյան ...»-ը, միջնադարյան հայ ճարտարապետությունը, մանրանկարչությունը եւ ապա՝ Աբովյանի «Վերքը» ու 19-20-րդ դարերի ամբողջ հայ գրականությունն ու հայ արվեստը:

Յայ մշակույթը դարերի ընթացքում ստեղծել է մեր գոյության մեծ ավանդույթի ծիրը: Դեռեւս Քերթողահայրն է գրել. «Որովհետեւ եթե հիրավի գովության արժանի են թագավորներից նրանք, որոնք իրենց ժամանակները գրով եւ պատմությամբ հաստատեցին, եւ յուրաքանչյուրն իր իմաստության գործերն ու քաջությունն արձանագրեցին վեպերի ու պատմությունների մեջ, նրանց նման մեր կողմից գովասանական խոսքերի արժանացան նաեւ դիվանների մատենագիրները, որոնք այս ծանր աշխատանքով պարապեցին» (Մովսես Խորենացի, Յայոց պատմություն, գիրք Ա, գլուխ Գ): Յուրաքանչյուր գիրք, որ գրվել է հայոց հնամենի լեզվով, եղել է այս Մայր գրքի շարունակությունը՝ նրա մի ճյուղը, մի ոստը, մի շյուղը եւ այդպես միայն մտել ազգային Բանի մտավոր կառույցի մեջ: Յակառակ դեպքում դարձել է վրիպում ու սայթաքում. այդպես է, որովհետեւ այլ կերպ ազգային պատմությունը չի սերվում ազգային կենսագրությունից:

Յայոց պետականության կորուստից եւ անվերջանալի պարտություններից հետո ժողովրդի դիմակայությունը, ուստիեւ գոյությունը միայն մշակույթի գոյությամբ ու մշակութային հաղթանակներով են պայմանավորված: Կրկնեմ, որ մշակույթ ասածի մեջ լայն ընդգրկումով իրենց անփոխարինելի տեղն ունեն մայրենի լեզուն եւ պետական կրոնը: Զարմանալի չէ, որ քրիստոնեությունը մենք ընդունեցինք հայոց պետականության թուլացման շրջանում, նույնպիսի պայմաններում ստեղծվեցին նաեւ մաշտոցյան գրերը:

Նրանք, ովքեր ժամանակների թավալումների մեջ մնացին հայ մշակույթի հոգեւոր դաշտում, ապրեցին հայ, իսկ նրանք, ովքեր հեռացան այդ մշակույթի հոգեւոր դաշտից, դադարեցին հայ լինելուց: Վերջինները կորան՝ որպես ազգային տեսակ. դարձան պարսիկ, արաբ, թուրք, ռուս, քուրդ, եվրոպացի, ամերիկացի: 18-րդ դարում Լեհաստանի, Յունգարիայի հայությունն ընդունեց կաթոլիկություն եւ ժամանակի ընթացքում կորավ՝ որպես ազգային տեսակ: Ըստ որոշ տվյալների՝ այսօր Թուրքիայում կան մի քանի միլիոնի հասնող մահմեդականացած հայեր, որոնց ազգային պատկանելությունն արդեն իսկ վտանգված է:

Յոգեւոր այս պատերազմն ավելի դաժան ու կործանարար մաքառումներով մեր առջեւ է կանգնել նաեւ այսօր: Սոցիալական անապահով վիճակը, գործազրկությունը տեղահան են անում հայությանը թե՛ Յայաստանում եւ թե՛ հարեւան երկրներում՝ Իրանում ու Վրաստանում: Թուրքիան նույնպես օժանդակում է Բելգիայի ու Յոլանդիայի կառավարություններին՝ կազմակերպելու հայության ներգաղթը իրենց երկրներ: Ժողովրդի որոշ հատվածներ չնչնագույն նյութական ապահովության ակնկալիքով կորցնում են իրենց բարոյական կերպարը: Ապազգային քարոզչությունը ու ազգային բարձր գաղափարները ժողովրդի նույն այդ հատվածների համար դարձրել են ոչինչ: Իսկ դա նշանակում է, որ այդ մտայնությունը կրող հայը, հեռանալով ազգային հոգեւոր-մշակութային դաշտից, դառնալու է ոչինչ ու ոչնչություն: Այս երեւույթի հիմքերը միայն սոցիալական անարդարությունների ու մարդու անպաշտպանվածության հետեւանք չեն, այլեւ գալիս են ազգային արժանապատվության պակասից. միայն թե փախչեն երկրից, որպեսզի իրենց որդին բանակում չծառայի, միայն թե հեռանան, որպեսզի մտնեն այլոց ապահով կառույցների մեջ:

Ամեն ինչի վրա գրված է՝ «Վաճառվում է»: Վաճառվում են տունը, առանձնատունը, խանութը, ձեռնարկությունը, մեքենան: Վաճառվում են մարդկային բարոյականությունն ու ազգային արժանապատվությունը: Այսպես շարունակվելու դեպքում՝ Յայաստանի վրա էլ մեծ տառերով կգրեն՝ «Վաճառվում է», եւ ամեն ինչ կավարտվի: Այն, ինչ կիսով չափ արեց եղեռնը՝ կարմիր ջարդը, կշարունակեն եւ կամբողջացնեն ազգային ոգու թուլացումից առաջացած հայրենադավությունը եւ ուծացումը՝ սպիտակ ջարդ: Նույնիսկ ոմանք շարժման մեջ են դնում այսպիսի մտքեր. եթե Յայաստանի հայությանը մի բան պատահի, այսինքն՝ Յայաստանի հայությունը բնաջնջվի, գոնե Սփյուռքի հայությունը կմնա՝ որպես հայի տեսակ: Եվ դրանով պատճառաբանում ու արդարացնում են հայրենիքից արտահոսքը: Այս պարտվողական քարոզչությունը կոչված է ներքուստ քայքայելու Յայաստանը:

Ի՞նչ ենք արել եւ ի՞նչ ենք անելու այս ամենի դեմ եւ, ընդհանրապես, ազգային ոգու ամրապնդման համար:

Շատ ժողովուրդներ ունեն իրենց գոյատեւման ու պայքարի ծրագիրը: Մերը կարծես ինքնուսույցի նման է: Մենք պետք է ստեղծենք մեր ազգափրկիչ ծրագիրը՝ հայկականության գաղափարախոսությունը եւ դրա հիմքում հիմնավորապես դնենք հայոց մշակույթը: Յայ մշակույթը հանուն Յայոց դատի պետք է շարունակի մնալ պայքարի զենք: Առավել եւս, որ հայության խոշոր զանգվածներն ապրում են հայրենիքից դուրս: Դրա համար, նախ, անհրաժեշտ է ազգային արժեքների համաշխարհային նշանակության բացահայտում, այդ արժեքների նորոգված, թարմացված



ընկալումով ու տարածումով: Առանց ազգային արմատներից կտրվելու՝ հայ մշակույթը պետք է հաղթահարի իր տեղային պարփակվածությունը եւ, իր յուրահատկությունների հաշվառումով, առաջնորդվի համաշխարհային չափանիշներով:

«Մեկ ժողովուրդ՝ մեկ մշակույթ» կարգախոսը լավ տպավորություն է թողնում համահայկական խաղերի ժամանակ: Անպայման գնահատելի են եվրոպական մայրաքաղաքներում կազմակերպվող ցուցահանդեսներն ու համերգաշրջանները: Միջոցառումների շղթան կազմակերպված մշակութային քաղաքականության մի մասն է: Ինչպես հայ ժողովրդի գոյապահպանման, այնպես էլ հայ արվեստի մշակութաբանական ծրագրի ստեղծումը 21-րդ դարում ուծացմանը դիմակայելու անհրաժեշտ պայման է: Այլ կերպ լինել չի կարող, որովհետեւ, նորից եմ կրկնում, 21-րդ դարը դառնալու է մշակութային ծանր ու կործանարար պատերազմների հարյուրամյակ: Քաղաքական, ռազմական, կրոնական, տնտեսական հակամարտությունների հետ մեկտեղ ուժեղանալու է մշակութային պայքարը: Մշակույթը դառնալու է ազգերի առավելությունն ու ուժը հաստատող գործոն եւ այդ ուժով ու միջոցներով սատարելու է այն երերուն անձանց, որոնք վաճառում են իրենց հոգիները տարբեր տեսակի աղանդների, քաղաքական քարոզչությունների, ուսմունքների եւ այլն: Այսինքն՝ շարունակվելու է հոգիների որսը:

*Շարունակությունը՝ էջ 7*

# ՇԵՆՈՒԴԱ Գ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ 2003-ի թիվ 19-24, 2004-ի թիվ 1-12*

## ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԴԵՐԸ

Ս. Պողոս առաքյալը, խոսելով Տեր Քրիստոսի փրկչական քավության մասին, ասում է. «Որովհետեւ կա... մեկ Միջնորդ Աստծո եւ մարդկանց միջեւ՝ Յիսուս Քրիստոս Մարդը, Ով Իրեն իբրեւ փրկանք տվեց բոլորի համար» (Ա Տիմ. Բ 5): Ս. Յովհաննես առաքյալը նույնպես նման միտք է արտահայտում քավության եւ դրա հետ կապված միջնորդության մասին: Նա ասում է. «Եթե մեկը մեղանչի, Աստծո առաջ բարեխոս ունենք Յիսուս Քրիստոսին՝ արդարին եւ անարատին: Նա է մեր մեղքերի քավությունը, եւ ոչ միայն մեր, այլեւ ամբողջ աշխարհի» (Ա Յովհ. Բ 1-2):

Յետեւաբար, այն միջնորդությունը, որի մասին ս. Պողոս առաքյալը խոսում է, վերաբերում է փրկագործությանը: Իսկ այն բարեխոսությունը, որի մասին ս. Յովհաննես առաքյալն է խոսում, վերաբերում է քավությանը:

Սակայն մեր բողոքական եղբայրները գործածում են այս երկու համարներն ավելի լայն իմաստով՝ փրկագործությունից ու քավությունից հասցնելով Աստծո եւ մարդու միջեւ ցանկացած միջնորդության մերժմանը:

***Նրանք հավատում են Աստծո եւ մարդու միջեւ ուղղակի հարաբերությանը, ինչ պատճառով եւ կարիք չունեն քահանայության կամ եկեղեցու միջնորդության:***

Նրանք քահանայությունը դիտում են իբրեւ միջնորդություն, ուստի եւ չեն հավատում դրան: Սրբերի բարեխոսությունը նույնպես համարում են միջնորդություն, ուստիեւ չեն հավատում եւ սրան: Եվ քանի որ մեղքերի խոստովանությունն ու արձակումն իրագործվում են քահանայի միջոցով, նրանք դրանց կարիքը չունեն: Նրանք հավատում են, որ իրենք ուղղակի Աստծուց են թողություն ստանում՝ անմիջապես Նրան խոստովանելու միջոցով:

Նրանք կարեւորություն չեն տալիս նաեւ հանգուցյալների համար աղոթքին՝ համարելով, որ սա նույնպես եկեղեցու բարեխոսությունն է նրանց համար, ուստիեւ միջնորդության մի տեսակ:

***Վերցնենք Մկրտությունն իբրեւ մեկ այլ օրինակ:***

Մկրտությամբ վերածնունդը (Յովհ. Գ 5, Տիտ. Գ 5), մկրտության միջոցով արդարացումն ու մեղքերի թողությունը (Գործք Բ 38, ԻԲ 16), ըստ բողոքականների, ձեռք են բերվում պարզապես հավատով՝ այն ուղղակի հարաբերությամբ, որ նրանք կարծում են, թե ունեն Աստծո հետ, եւ որը նրանց համար ավելորդ է դարձնում քահանայությունն ու եկեղեցին:

***Միայն հավատը, ըստ նրանց, բավական է փրկության հասնելու համար:***

Կարծեք Մկրտությունը փրկության համար ոչ մի արժեք չունի, կամ Տեր Յիսուսը չէ, որ ասում է. «Ով հավատա եւ մկրտվի, կփրկվի» (Մարկ. ԺԶ 16): Տես նաեւ աստվածաշնչյան մյուս համարները, որ ցույց են տալիս Մկրտության եւ փրկության միջեւ եղած առնչությունը (Ա Պետ. Գ 20-21, Տիտ. Գ 5):

***Նշանակում է՝ նրանք հավատում են, որ մարդ փրկվում է մեկ վայրկյանում:***

Նրանք հավատում են, որ փրկությունը Մկրտության կարիքը չունի, քանի որ այն կատարվում է եկեղեցու միջոցով, մինչ փրկությունը կախված է միայն Աստծո եւ մարդու միջեւ ուղղակի հարաբերությունից, անձնական հավատի միջոցով, առանց եկեղեցու միջնորդության:

<u>Յավատ</u>

Այստեղ կամենում եմ հարց տալ հավատի մասին, այն հավատի, որով է բողոքականը կարծում, թե կարող է միանգամից ձեռք բերել արդարացում, վերածնունդ, որդեգրություն, մեղքերի թողություն եւ փրկություն, կամ ինչպես նրանցից ոմանք են ասում՝ «Ամեն ինչ կարելի է ձեռք բերել հավատով»: Յարցս հետեւյալն է.



***Ինչպե՞ս մարդ կարող է այսպիսի հավատ ձեռք բերել: Մի՞թե դա եկեղեցու միջոցով չի կատարվում:***

Պետք է քարոզիչ լինի, ում միջոցով մարդիկ հավատան, եւ այսպիսի քարոզիչը պիտի ուղարկվի եկեղեցու կողմից, ինչպես ս. Պողոս առաքյալն է բացատրում. «Ով Տիրոջ անունը կանչի, կփրկվի: Իսկ ինչպե՞ս կկանչեն նրան, ում չհավատացին. կամ ինչպե՞ս կհավատան, ում չլսեցին. կամ ինչպե՞ս կլսեն առանց մեկի քարոզելու. կամ ինչպե՞ս կքարոզեն, եթե չուղարկվեն» (Յռոմ. Ժ 13, 14-15): Նշանակում է՝ Եկեղեցին այն միջնորդն է, որի միջոցով մարդիկ հասնում են առ Աստված հավատին:

Ս. Պողոս առաքյալն այս մասին բացատրում է կորնթացիներին՝ կապված իր եւ Ապողոսի սպասավորության հետ՝ ասելով. «Իսկ արդ՝ ո՞վ է Պողոսը, կամ ո՞վ է Ապողոսը. սպասավորներ, ***ում միջոցով*** հավատացիք» (Ա Կոր. Գ 4-5):

Նրանց ծառայության միջոցով էր, որ կորնթացիները հավատացին:

Նույնը նշված է նաեւ Յովհաննես Մկրտչի վերաբերյալ. «Նա եկավ վկայելու համար, որպեսզի վկայի Լույսի մասին, որպեսզի ամենքը հավատան ***նրա միջոցով***» (Յովհ. Ա 7):

Ուրեմն՝ առաջին միջնորդությունն Աստծո եւ մարդկանց միջեւ սա է՝ մարդկանց Աստծուն հավատալ տալ:

***Եթե Աստծո եւ մարդկանց միջեւ միջնորդ չի կարող լինել, ապա ո՞րն էր գործը մարգարեների, առաքյալների եւ ուսուցիչների:***

Գրված է, որ Տերը «տվեց ոմանց լինելու առաքյալներ, ոմանց՝ մարգարեներ, ոմանց՝ ավետարանիչներ, ոմանց՝ հովիվներ եւ ուսուցիչներ» (Եփես. Դ 11): Իսկ ինչո՞ւ: Ո՞րն է նրանց բոլորի գործը, եթե ոչ՝ լինել Աստծո եւ մարդկանց միջեւ միջնորդ: Ուստիեւ առաքյալն ասում է, որ նրանց գործը «սրբերին հաստատելու, ծառայության գործի եւ Քրիստոսի մարմնի շինության համար է» (Եփես. Դ 12):

Նրանք հավատն են բերում մարդկանց:

*Եվ երբ մարդիկ հավատում են, նրանց թողնում են այս հանգրվանո՞ւմ: Ո՛չ, նրանց մկրտում են:*

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՇԵՆՈՒԴԱ Գ
# ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



*Սկիզբը՝ էջ 5*

Տեր Յիսուսն ասաց Իր սուրբ առաքյալներին. «Գնացեք ամբողջ աշխարհով մեկ եւ քարոզեք Ավետարանը բոլոր արարածներին: Ով հավատա եւ մկրտվի, կապրի» (Մարկ. ԺԶ 15-16): Նաեւ՝ «Գնացեք այսուհետեւ, աշակերտ դարձրեք բոլոր հեթանոսներին, մկրտեք նրանց Յոր, Որդու եւ Սուրբ Յոգու անունով: Սովորեցրեք նրանց պահել այն ամենն, ինչ պատվիրեցի ձեզ» (Մատթ. ԻԸ 19-20):

***Եկեղեցու քարոզության եւ ուսուցանության այս գործի միջոցով հավատը տարածվեց:***

## Մկրտություն

***Եկեղեցին մկրտում էր բոլոր հավատացողներին:***

Առաքյալները մկրտեցին երեք հազար հրեաների, ովքեր հավատացին Յոգեգալստյան օրը (Գործք Բ 37-41): Նրանք մկրտեցին Սամարիայի բնակիչներին, երբ սրանք հավատացին (Գործք Ը 12-16): Եթովպացի ներքինին մկրտվեց հավատալուց հետո (Գործք Ը 37-38):



Մկրտվեց նաեւ Փիլիպպուսի բանտապետը, ում Պողոս առաքյալն ասաց. «Յավատա՛ Տեր Յիսուս Քրիստոսին, եւ պիտի փրկվեք դու եւ քո ընտանիքը» (Գործք ԺԶ 31), եւ «անմիջապես մկրտվեցին նա եւ իր ամբողջ ընտանիքը» (Գործք ԺԶ 33): Ծիրանավաճառ Լիդիան նույնպես մկրտվեց իր ողջ ընտանիքով (Գործք ԺԶ 15):

***Ուրեմն, ինչպես տեսանք, Եկեղեցին դարձավ միջնորդ՝ հավատը տարածելու եւ հավատացողներին ու սրանց ընտանիքները մկրտելու գործում:***

Յետեւաբար կարո՞ղ է մեկը համարձակվել ասելու, թե քավությունից ու փրկագործությունից բացի չկա այլ միջնորդություն Աստծո եւ մարդկանց միջեւ: Եկեղեցու գործն էր քարոզելն ու հավատը սփռելը, եւ նրա քահանաները մկրտում էին հավատացյալներին: Այս քահանաները Սուրբ Գրքում հաճախ կոչվում են «պատգամավորներ» (Բ Կոր. Ե 20), «Աստծո տնտես» (Տիտ. Ա 7), կամ՝ «Աստծո խորհուրդների տնտեսներ» (Ա Կոր. Դ 1): Ուրիշ ի՞նչ:

Տերը նրանց եւ միա՛յն նրանց է հանձնել ուսուցման գործը:

## Ուսուցում

Երբ Տերն առաքյալներին հանձնեց քարոզելու եւ մկրտելու գործը, Նա ասաց նրանց. «Սովորեցրեք նրանց պահել այն ամենն, ինչ պատվիրեցի ձեզ» (Մատթ. ԻԸ 20): Այսպիսով, առաքյալները սկսեցին «խոսքի սպասավորությունը» (Գործք Զ 4)՝ այն խոսքի, որի մասին Յակոբոս առաքյալն ասում է. «Կամենալով ծնեց մեզ ճշմարտության խոսքով» (Յակ. Ա 18):

Խոսքը տանում է դեպի հավատ, եւ հավատը՝ դեպի մկրտություն, որի միջոցով երկրորդ ծնունդն է տեղի ունենում: Իսկ վարդապետությունը (ուսուցումը) խոսքի աղբյուրն է:

Ս. Պողոս առաքյալը Քրիստոսի եւ Եկեղեցու միջեւ հարաբերության մասին ասում է. «Որպեսզի սրբի նրան՝ խոսքով մաքրելով ջրով լվացմամբ» (Եփես. Ե 26): Այստեղ խոսքն առաջնորդում է դեպի հավատ, հավատը՝ դեպի մկրտություն ու ջրով լվացում, որը լվանում է մեղքերից, եւ դեպի մաքրություն ու սրբագործում:

***Ինչպես որ մկրտությունն ու հավատն են կապված փրկության հետ (Մարկ. ԺԶ 16), այդպես էլ ուսուցման (վարդապետության) խոսքը:***

Ուսուցման խոսքն առաջնորդում է դեպի հավատ ու մկրտություն, որտեղից էլ՝ դեպի փրկություն, եւ կամ՝ առաջնորդում է դեպի ապաշխարություն, ապա՝ փրկություն: Ս. Պողոս առաքյալն ասում է իր աշակերտ ս. Տիմոթեոս եպիսկոպոսին. «Զգո՛ւյշ եղիր անձիդ եւ վարդապետությանը եւ մնա՛ դրա մեջ: Եթե դա անես, կփրկես թե՛ քեզ, թե՛ քեզ լսողներին» (Ա Տիմ. Դ 16):

## Ծնունդ Աստծուց

Խոսքով, հավատով ու մկրտությամբ անձը ծնվում է երկրորդ ծնունդյամբ:

***Եկեղեցին մարդկանց ծնում է հավատով եւ մկրտությամբ:***

Եկեղեցին մարդկանց ծնում է Սուրբ Յոգով՝ «ջրից եւ Յոգուց» (Յովհ. Գ 5): Նա նրանց ծնում է Աստծո համար, որպեսզի դառնան Աստծո զավակները: Նույն մտքով է, որ ս. Պողոս առաքյալն ասում է Փիլիմոնին. «Աղաչում եմ քեզ իմ որդի Ոնեսիմոսի համար, ում ծնեցի իմ շղթաներում» (Փիլիմ. 10): Պողոս առաքյալը հոգեւոր ծնունդը նկատի ունի, քանի որ ամուսնացած չէր: Նա նույնն ասում է կորնթացիներին. «Թեկուզ բյուրավոր դաստիարակներ ունենաք ի Քրիստոս, սակայն ո՛չ՝ բազում հայրեր, որովհետեւ ի Քրիստոս Յիսուս ե՛ս ծնեցի ձեզ ավետարանի միջոցով» (Ա Կոր. Դ 15):

Աստծո համար զավակներ ծնելուց բացի, Եկեղեցու մի ուրիշ գործն է՝

## Սուրբ Յոգին տալը

***Եկեղեցին այն միջնորդն է, որով մկրտվողներին տրվում է Սուրբ Յոգին:***

Արդյոք կարո՞ղ է մեկն ապրել հոգեւոր կյանքով առանց իր մեջ Սուրբ Յոգու գործունեության: Եթե սա յուրաքանչյուր հավատացյալի համար կենսական անհրաժեշտություն է, ինչպե՞ս կարող է նա Սուրբ Յոգին ձեռք բերել:

Սուրբ Գիրքն ասում է, որ երբ առաքյալներն իմանում են, որ Սամարիայի բնակիչները դարձի են եկել, նրանց մոտ են ուղարկում Պետրոսին ու Յովհաննեսին՝ Սուրբ Յոգին տալու նրանց. «Այդ ժամանակ ձեռքերը նրանց վրա դրեցին, եւ նրանք Սուրբ Յոգին ստացան» (Գործք Ը 17): Նույնը պատահեց Եփեսոսի այն բնակիչներին, ովքեր մկրտվեցին. «Եվ երբ Պողոսը ձեռքը դրեց նրանց վրա, Սուրբ Յոգին իջավ նրանց վրա» (Գործք ԺԹ 6):

***Այնուհետեւ Սուրբ Յոգին տրվում էր սուրբ օծման միջոցով (Ա Յովհ. Բ 20, 27):***

Ինչպե՞ս կարող է հավատացյալն այս օծումը ստանալ: Իհա՛րկե Եկեղեցու միջոցով, որովհետեւ ոչ ոք չի կարող ինքն իրեն օծել: Ուրեմն իրավունք ունե՞նք ասելու, թե չկա միջնորդություն: Չէ՞ որ դու Սուրբ Յոգին ընդունել ես այս միջնորդության միջոցով:

Օծման սովորությունը հասնում է մինչեւ հինկտակարանյան վաղ ժամանակները, երբ Աստված Մովսեսին պատվիրեց պատրաստել «սուրբ օծման յուղ» (Ելք Լ 25) եւ դրանով օծել Վկայության խորանն ու տապանակը, սեղանն ու անոթները. «Սրբագործիր դրանք, որպեսզի լինեն սրբությունների սրբություն» (Ելք Լ 25-30, Խ 9-16):

Սուրբ օծմամբ Սամվել մարգարեն օծում էր թագավորներին, եւ Սուրբ Յոգին իջնում էր նրանց վրա (Ա Թագ. Ժ 10, ԺԶ 13):

Եկեղեցու մի ուրիշ միջնորդությունն է՝

## Տիրոջ համար սպասավորներ կարգելը

Աստծո թագավորությունը չի կարող շինվել առանց Տիրոջ սպասավորների: Այս գործը հանձնվել էր Եկեղեցուն, ինչպես ծառայության համար Բառնաբասի եւ Սավղոսի ընտրության պարագայում: «Մինչ Տիրոջ պաշտամունքի մեջ էին եւ պահք էին պահում, Սուրբ Յոգին ասում է. «Առանձնացրեք Ինձ համար Բառնաբասին ու Սավղոսին այն գործի համար, որի համար կանչել եմ նրանց»» (Գործք ԺԳ 2):

***Չնայած այս աստվածային կոչմանը՝ իբրեւ սպասավոր կարգվելը պիտի կատարվեր օրինական միջոցներով, այսինքն՝ Եկեղեցու եւ ձեռնադրության միջոցով:***

Ուստի, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, «Այդ ժամանակ պահք պահելով եւ աղոթք անելով՝ ձեռքերը նրանց վրա դրեցին եւ ուղարկեցին: Եվ նրանք, Սուրբ Յոգուց ուղարկվելով, իջան Սելեւկիա եւ այնտեղից նավեցին Կիպրոս» (Գործք ԺԳ 3-4): Այսպիսով, նրանք Սուրբ Յոգու կողմից առաքված նկատվեցին միայն Եկեղեցու կողմից ձեռնադրությունից հետո:

Նույնը պատահեց նաեւ ս. Տիմոթեոս եպիսկոպոսին: Ս. Պողոս առաքյալն ասում է նրան. «Ուստի հիշեցնում եմ քեզ արծարծել Աստծո շնորհը, որ քո մեջ է իմ կողմից ձեռնադրվելուդ միջոցով» (Բ Տիմ. Ա 6): Շնորհն Աստծուց է, սակայն ձեռք է բերվում Եկեղեցում, քահանաների կողմից ձեռնադրման միջոցով:

Բողոքականներն ընդունում են սպասավորներ կարգելու համար ձեռնադրությունը (ձեռքեր դնելը), սակայն չեն ընդունում Եկեղեցու միջնորդությունն Աստծո եւ մարդկանց միջեւ:

«Ով լսելու համար ականջ ունի, թող լսի» (Մատթ. ԺԳ 43):

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ
# ՔԱՐՈԶ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ



*Սկիզբը՝ էջ 3*

Իսկ հարսանիքի մասին առակում հարսանիքի հագուստներ չունեցողին դուրս հանեցին խնջույքից: Քանի որ այստեղ հավատի նշանակը հարսն է, մահից հետո կոչվում է հարսանիքի, իսկ հարության ժամանակ պիտի լինի հարսանիք, եւ պիտի պսակվեն Փեսայի հետ: Բազում ուրիշ վկայություններ նույնպես կան: Իսկ ինչպես ասում է սուրբ Կյուրեղը, դատաստանին հատուցումն է հետեւելու, Դատավորի [գալստյանը]՝ դատաստանը. Դատավորի գալուստը վերջին՝ վախճանի Օրն է լինելու, ապա ուրեմն այն օրն էլ պիտի լինեն դատաստանը եւ արդարների ու մեղավորների հատուցումը, հոգու եւ մարմնի միասին փառքն ու պսակը: Իսկ եթե որեւէ մեկն ասի եւ ընդդեմ բերի աղքատ Ղազարոսի եւ մեծատունի մասին առակը, որոնցից առաջինը Աբրահամի գոգում էր, իսկ երկրորդը՝ տանջանքների մեջ, այս մասին կասենք, ինչպես սուրբ Կյուրեղն է ասում, թե այս օրինակն է արդարների ու մեղավորների, թե ինչպե՛ս պիտի լինի աշխարհի ավարտին: Եվ ինչպես որ մինչեւ Քրիստոսը թե՛ արդար, թե՛ մեղավոր բոլոր հոգիները դժոխքում էին մեր նախահոր հանցանքների պատճառով՝ ըստ այն խոսքի, թե՝ «Մահը թագավորեց Ադամից մինչեւ Մովսես», որ նշանակն էր Քրիստոսի: Այսպես նաեւ Քրիստոսից հետո մինչեւ աշխարհի վախճանը բոլոր հոգիները երկնքում են՝ հոգիների կայաններում Քրիստոսի կողմից ազատվելու եւ Նրա շնորհների շնորհիվ՝ ըստ այն խոսքի, թե՝ «Յա՛յր, քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին», այսինքն՝ ամբողջ բնությունս: Եվ ըստ Պողոսի՝ «Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, նույնպես եւ Քրիստոսով ամենքը պիտի կենդանանան»: Քանի որ սուրբ վարդապետները հոգիների պահվելու մասին երեք փոփոխություն գիտեն՝ մինչեւ Քրիստոսը, Քրիստոսից հետո եւ աշխարհի վախճանին: Նախ՝ Քրիստոսից առաջ՝ բոլորը դժոխքում էին, երկրորդ՝ Քրիստոսից հետո՝ բոլորը հոգիների կայաններում՝ երկնքում են, երրորդ՝ աշխարհի վախճանին՝ ոչխարներն ու այծերը պիտի բաժանվեն, որը երկնքի արքայությունն է եւ հավիտենական դժոխքը: Առաջինը՝ Ադամի պատժի պատճառով է, երկրորդը՝ Քրիստոսի շնորհների շնորհիվ, երրորդը՝ ըստ յուրաքանչյուրի գործերի:

Իսկ թե որտեղ են հոգիների կայանները. մեր վարդապետներն ասում են, որ երկնքում են՝ ութերորդ խորանի մոտ, որտեղ լուսավորներն են: Ասում են խորանի աջակողմ եւ ձախակողմ, այսինքն՝ Քրիստոս Աստծո քաղցր հայացք, որ աջն է, եւ դառն ու ահավոր, որ ձախն է: Ոմանք էլ ասում են, թե բոլոր հոգիները նույն տեղում են, բայց զանազանվում են ըստ իրենց գործերի եւ խորհուրդների. մեկը լի է անմահությամբ, մյուսը լի է դառնությամբ եւ հուսահատությամբ, ինչպես ասացինք:

Այս ամենն այն մասին, թե ինչ է մահը, եւ ինչպիսին է այն: Թող Քրիստոս Աստված Իր շնորհով մեզ նույնպես արժանացնի աջակողմյան կայաններին, քաղցր ու անսպառ ցնծությանը. ամեն:

*Աշխարհաբարի վերածեց*
*Մարթա Արաբյանը*



# «ՄՇԱԿՈՒՅԹԸ ԲԱՆԱԿ Է»



Սկիզբը՝ էջ 5

Համաշխարհային արվեստը, ընդհանուր առմամբ՝ մշակույթն ու քաղաքականությունը, թեեւ ունեն զարգացման ընդհանուր օրինաչափություններ, բայց բաժանված են կրոնների եւ ազգային ավանդույթի առանձնահատուկ կողմերով: Մի կողմից՝ ընդհանրության ու միասնության, մյուս կողմից՝ ազգային ոգու մեջ խորանալու եւ առանձնանալու բացահայտ միտումներ, որոնք հարաճուն ընթացքով ավելի լայն թափ են ստանալու: Այդ երկկողմ, արտաքուստ հակադիր թվացող զարգացման ուղիները որոշելու են դարաշրջանի ընդհանուր մշակութային զարգացման բնույթը:

21-րդ դարում կրոնը պահպանելու է իրեն վերապահված դերը: Հատկապես իսլամական երկրներում այն ավելի է շեշտելու ազգային կյանքի իր կազմակերպիչ նշանակությունը: Ինչպես խաչակրաց արշավանքների ժամանակ, այնպես էլ հիմա կրոնը շարունակում է մնալ քաղաքականության իշխող գործոն եւ ստեղծել պետական կառուցվածքներ: Կրոնական այն մոլեռանդությունը, որ բնութագրական է իսլամական երկրներին, բնութագրական չէ քրիստոնեությանը: Քրիստոնեական երկրներում կրոնը միայն իր պարտականությունների շրջանակում է: Քրիստոնեության հետեւորդների համար խաչակրաց պատերազմների ժամանակներն անցել են, եւ վաղուց հաղթահարված է կրոնական արմատականությունը: Մի բան, որը գնալով ուժգնացող թափ է հավաքում իսլամական երկրներում: Քրիստոնեական աշխարհում ազատ մտածողության համար շատ ավելի մեծ հնարավորություններ կան, քան իսլամական: Ուստի քաղաքակրթության զարգացման ղեկը 21-րդ դարում եւս կմնա քրիստոնեական երկրների ձեռքին: Դա պայմանավորված է նաեւ նրանով, որ մշակույթի ասպարեզում իսլամը՝ որպես կրոն, խորությամբ դնում է իր կնիքը (ճարտարապետություն, նկարչություն, երաժշտություն, պար, զարդանախշ, գունային մտածողություն եւ այլն) եւ միաժամանակ, միաձեւ միասնականություն պարտադրում տարբեր նույնադավան երկրների: Իսկ քրիստոնեությունն այս հարցում շատ ազատ է ու բազմազան: Քրիստոնեությունը վաղուց արդեն իր ուսմունքը չի պարտադրում ստեղծագործական մտածողությանը: Դա միջին դարերի (IV-XIV) մենաշնորհն էր: Վերածննդի դարաշրջանը քրիստոնեությունը դարձրեց արվեստ, մշակույթ: Այս ամենով հանդերձ՝ որպես հավատի միջոց՝ կրոնն այլեւս ի զորու չէ միավորելու աշխարհը: Այն գնալով էլ ավելի է դառնալու քաղաքական գործոն եւ աշխարհը վերահսկողության գոտիների բաժանելու նախադրյալ:

Մարդկության հոգեւոր կյանքում ամենահզոր ներգործության միջոցներից մեկը դառնալու է արվեստը. մի կողմից՝ զանգվածային արվեստը, մյուս կողմից՝ բարձրաշխարհիկ արվեստը: Մտաբերենք գեղարվեստական գրականության վիթխարի դերը խորհրդային հասարակարգում, մտաբերենք գրքերի, գրական մամուլի միլիոնավոր տպաքանակները: Այսօր էլ գրականությունը չի կորցրել իր դերը մեր հանրային գիտակցության մեջ: Նույնիսկ ԱՄՆ-ի պես գործարար մի երկրում այսօր իր լայն ներգործության եւ հետաքրքրությունների շրջանակն ունի պոեզիան:

Հզոր երկրները պարտադրելու են իրենց զանգվածային արվեստը՝ որպես գաղափարական պայքարի միջոց: Փոքր ժողովուրդները պետք է դիմակայեն: Իսկ դրա համար պետք է շարունակեն ստեղծել իրենց արվեստը եւ դրա հանդեպ պայցանք առաջացնեն ոչ թե սոսկ նրա համար, որ իրենցն է, այլ որովհետեւ որակյալ բարձր արվեստ է:

Առաջացող ժամանակն ավելի է կարեւորելու մի քանի հատկանիշներ՝ արագություն, տարածական ընդգրկունություն, ազգային ավանդույթների մեջ խորացում, այդ ավանդույթների միտվածություն դեպի համաշխարհային չափանիշները, փոխադարձ ճանաչողության ու շփումների արտակարգ բազմազանություն, անընդհատական վերագնահատություններ ու նորոգչական փուլեր, ժխտումի ու հաստատումի անընդմեջ ընթացք: Եվ, ի վերջո, գալու է արտաերկրային քաղաքակրթության հետ շփման պահը: Ուստի աշխարհը պետք է պատրաստ լինի դրան:

Այս հատկանիշները եռանդուն ու հարաճուն հոսքով ներգործելու են գեղարվեստական մտածողության վրա. ստեղծագործող անհատին ավելի բնութագրական է լինելու թռիչքային մտածողությունը: Դա իր հերթին հանգեցնելու է զուգորդական մտածողության գերակայությանը: Թռիչքային եւ զուգորդական մտածողությունն ստեղծելու է արվեստի իր յուրահատուկ լեզուն: Այդ լեզվի հիմքը լինելու է փոխաբերությունը: Ոճի մնայունության գաղտնիքը Մարսել Պրուստը տեսնում էր հենց փոխաբերության մեջ. «Գրողի ոճը համեմատաբար երկար կպահի միայն փոխաբերությունը»: Իսկ Ֆեդերիկո Գարսիա Լորկան փոխաբերությունը համարում էր երեւակայության «հարազատ դուստրը»:

Մեր գրականության ու արվեստի ներկայացուցիչները պիտի շարունակեն ու համաշխարհային ասպարեզ հանեն հայոց ազգային ոճը, աշխարհին ի ցույց դնեն հայոց ազգային ոգեղեն կերպարը: Դա նորից պիտի լինի Արարատի շուրջ հյուսված մեր ժողովրդի պատմությունը, եւ այդ պատմությունը պետք է ապրող ու ապրեցնող խոսք բերի իր ժողովրդին, այդ խոսքով միավորի նրան եւ առաջնորդի նոր հազարամյակում: Այդպես է մեծ Քերթողահայրը շարադրել մեր պատմության սկիզբը, եւ դա այսպիսին է. «Պատմությունն այսպես էր սկսվում: Աստվածներից առաջիններն ահեղ էին եւ երեւելի եւ աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի եւ բազմամարդության սկիզբ» (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, գիրք Ա, գլուխ Թ):

Ազգային հիշողության հզոր լարի վրա ձգված մեր խոսքի նետը պիտի թռչի դեպի գալիքը, դեպի գալիք օրերի հայ մարդը եւ նրան իր ժամանակի մեջ հարազատացնի նախորդ բոլոր ժամանակների հետ, որպեսզի այդ բոլոր ժամանակների ոգեղեն ուժը վերստին շարունակի մնալ հայ հայրենիք եւ հայոց աշխարհ:

Այնպես, ինչպես եղել է ահեղ եւ երեւելի առաջին աստվածների ժամանակ:

*Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր*

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ

# ՅՈՀԱՆ ՎՈԼՖԳԱՆԳ ԳՅՈԹԵ



Սկիզբը՝ էջ 4

*Ես երգում եմ ինչպես թռչնակ,*
*Որ ապրում է սաղարթում.*
*Երգն է առատ վարձը միակ,*
*Որ իր հոգուց է հորդում.*
*Բայց թե կուզես պարգե՛վ ինձ տաս,*
*Ընտիր գինի տուր ինձ մի թաս,*
*Գինի՝ ոսկե գավաթում:*

Երգիչը հրաժարվում է արքայի ընծայած ոսկե շղթայից եւ դրա փոխարեն խնդրում է մի գավաթ ընտիր գինի, որի տակ անկասկած պետք է հասկանալ բանաստեղծին այնքան անհրաժեշտ ոգեշնչումը, ոգեւորումը:

Գյոթեն արհամարհանքով էր վերաբերվում ճամարտակությանը եւ սեղմ ոճը՝ «նեղվածքը» համարում էր բանաստեղծական իսկական արվեստի ցուցանիշ: Այս իմաստով ուշագրավ է նրա «Բնություն եւ արվեստ» սոնետը, որի եզրափակիչ տողերում ընդգծվում է հենց այդ էսթետիկական սկզբունքը.

*Կրթությամբ է, որ մարդ պիտի*
*բարձրանա.*
*Զուր են անկիրթ հոգիները վեր թեւում,*
*Զգվում վսեմ կատարյալին, սիրելիս:*
*Ով մեծին է ձգտում, պիտի թանձրանա,*
*Սեղմի մեջ է լոկ վարպետը երեւում,*
*Օրենքն է լոկ ազատություն մեզ տալիս:*

**(Թարգմ.՝ Ա. Մուշեղյանի):**

«Wandrers Nachtlied» վերնագրով Գյոթեն ունի երկու ոտանավոր:

Դա «Ճամփորդի գիշերվա երգը» վերնագրով Գյոթեն ունի երկու ոտանավոր՝ առաջինը թվագրել է 12 փետրվարի 1776 թ. եւ ուղղված է Շառլոտա ֆոն Շտայնին, իսկ երկրորդը՝ «Բոլոր գագաթներին» սկզբնատողով, Գյոթեն փորագրել է անտառապահի տնակի փախտակե պատին՝ Կիկելհան կոչվող լեռան վրա (Իլմենաուի մոտերքում), երբ հենց նոր էր լրացել նրա 31 տարին՝ 1780 թ. սեպտեմբերի 6-ի երեկոյան: Բանաստեղծը՝ «փոքր քաղաքի անձուկից, (....) մարդկանց տրտունջներից, պահանջներից, անուղղելի խառնիճաղանջից» փախչելու համար բարձրացել է լեռան վրա՝ Հերմանի մեծ ժայռի բարձունքից արեւի մայրամուտը դիտելու եւ տիկին ֆոն Շտայնին երեկոյան բնապատկերը նկարագրելու համար:

Վերջալույսի այս հափշտակված դիտարկումից էլ ծնվել է «Ճամփորդի գիշերվա երգը» քնարական պեյզաժը.

*Մութ գագաթներին*
*Շշունկն է մարում,*
*Ծառի կատարին*
*Շունչ չես նշմարում:*
*Հավքերն են լռել*
*Անտառում մութով.*
*Սպասիր դու էլ*
*Կհանչես շուտով:*

(Թարգմ.՝ Ա. Մուշեղյանի):

(Հովհ. Թումանյանն իր «Լերանց շարքերը նիրհել են մթնում» հայտնի թարգմանությունն արել է ըստ Մ. Յու. Լերմոնտովի «Горные вершины спят во тьме ночной» թարգմանության - վերջինս ավելի շուտ փոխադրություն է Գյոթեից, որի մեջ ռուս բանաստեղծը մուծել է իր հայրենի ռուսական բնությունը: Գիշերվա մթնում քնած լեռներ, մառախլապատ հովիտներ, փոշոտ ճանապարհ, անշարժ թփեր: Այս ամենը գրեթե նույնությամբ փոխանցվել է Հովհ. Թումանյանի հայերեն թարգմանությանը: Մինչդեռ Գյոթեի բնագրում գերմանական բնությունն է՝ անտառապատ լեռներ, ծառերի շնչառություն (պանթեիստ բանաստեղծին բնորոշ գիծ), գիշերվա հետ անտառում ննջող թռչուններ):



1813 թ. օգոստոսի 29-ին՝ իր ծննդյան տարեդարձի հաջորդ օրը, 64-ամյա Գյոթեն նորոգում է փորագրությունը: Իսկ մահից քիչ առաջ՝ 1831 թ. օգոստոսի 27-ին՝ իր ծննդյան տարեդարձի նախորդ օրը, 82-ամյա Գյոթեն վերջին անգամ այցի է գալիս անտառապահի տնակը, եւ պատին փորագրված բանաստեղծության վերջին տողերն այլ իմաստ են ստանում դեպի անէություն եւ անմահություն մեկնող բանաստեղծի համար:

Արտասովոր է եղել Գյոթեի մյուս բանաստեղծության՝ «Կոփտական երգի» ճակատագիրը, որն ավարտվում է «մուրճի» եւ «զնդանի» փոխաբերությամբ:

1787 թ.՝ իտալական ուղեւորության միջոցին, Գյոթեն ծանոթանում է իտալացի ալքիմիկոս եւ ոսկի խարդախող Ջուզեպպե Բալզամոյի (Կալիոստրո) արկածներին, որը նույն թվականին Հռոմի Պապի կողմից բանադրվեց ու բանտ նետվեց: Այդ թեմայով բանաստեղծը մտահղանում է «Մեծ Կոփտա» կամ «Խորհրդապաշտները» վերնագրով մի կոմիկական օպերա: Այս կատակերգության համար նա գրում է խրատաբանական բնույթի երկու բանաստեղծություն՝ երկուսն էլ «Կոփտական երգ» վերնագրով: Հին եգիպտական (կոփտական) քրմի իմաստությամբ գերմանացի մեծ բանաստեղծը սովորեցնում է իր պատանի ժամանակակցին մարդ դառնալու եւ դաժան կյանքի պայմաններին դիմակայելու արվեստը:

*Եկ ականջ դիր դու խորհրդիս*
*Ջահել օրըդ թանկ է, որդիս,*
*Տքնիր, որ շուտ խելոքանաս.*

(Բառացի՝ «Սովորիր, ժամանակին խելոքանաս» - թարգմանիչ Հակոբ Հարությունյանը ճոխացրել է՝ «Հիմիկվանից պիտի վարժվես՝ կյանքում ինչպես խելոք շարժվես» (Գյոթե, «Բանաստեղծություններ», Երեւան, 1946, էջ 32):

*Քանզի բախտի նժարը մեր*
*Տատանվում է միշտ վար ու վեր՝*

(Բառացի՝ «Բախտի մեծ կշեռքի վրա սլաքը հազվադեպ է կանգ առնում» - թարգմանիչ Հակ. Հարությունյանը բախտի կշեռքի այս պատկերավոր փոխաբերությունը, որի մեջ է հենց բանաստեղծության իմաստը, հաղորդում է պարզունակ՝ «Շատ անկայուն է բախտը մեր»):

*Պիտի իջնես կամ բարձրանաս,*
*Պիտի իշխես, շահես, տղա,*
*Կամ ծառայես ու տանուլ տաս,*
*Պարտվես եւ կամ հաղթող ելնես,*
*Մուրճ կամ զնդան պիտի լինես:*

**(Թարգմ.՝ Ա. Մուշեղյանի):**

Վենետիկյան էպիգրամներում Գյոթեն հետեւյալ կերպ է մեկնում «մուրճի« եւ «զնդանի» փոխաբերությունը.

*«Այդ զնդանը ես նմանեցնում եմ երկրին, մուրճը՝ տիրակալին,*
*Իսկ թիթեղը՝ ժողովրդին, որ ճկվում է նրանց արանքում:*
*Վա՜յ խեղճ թիթեղին, երբ հարվածները լոկ քմահաճ*
*Իջնում են անտեղի, իսկ կաթսան միշտ մնում է անավարտ»:*

**(Թարգմ.՝ Ա. Մուշեղյանի):**

Գյոթեի այս փոքրիկ բանաստեղծությունն անցնելու էր քաղաքական թեժ պայքարի բովով, հնչելու էր հեղափոխական գնդակներում եւ ռայխստագի դատավարության ժամանակ, իսկ «մուրճ եւ զնդան» խորհրդանիշները դրոշմվելու էին արեւելյան Գերմանիայի պետական դրոշին: «Մուրճ կամ զնդան» տողը թեւավոր արտահայտություն դարձավ եւ անցավ տարբեր ազգերի գրականությունների միջով: Առաջիններից մեկը այդ բանաստեղծությունը նկատեց Ավ. Իսահակյանը. վարպետի ձեռագրերի ֆոնդում գտնում ենք «Կոփտական երգի» գերմաներեն բնագիրը, արտագրված նրա ձեռքով (Գրականության եւ արվեստի թանգարան, Ավ. Իսահակյանի ֆոնդ II, N 2124): Դա մի անգամ եւս վկայում է Գյոթեի բանաստեղծության նկատմամբ նրա ունեցած հատուկ ուշադրության մասին:

Շարունակելի

*Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր*

## ՇԵՆՈՒԴԱ Գ

# ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ էջ 5*

### Հովվական գործն ու ապաշխարությունը

Արդյոք Աստված Իր հոտը թողե՞ց առանց հովիվների: Ո՛չ: Առաքյալն ասում է. «Զգո՛ւյշ եղեք ձեր անձերի եւ այդ ամբողջ հոտի հանդեպ, որի վրա Սուրբ Հոգին ձեզ տեսուչներ կարգեց՝ հովվելու Տիրոջ ժողովրդին, ում փրկեց Իր արյամբ» (Գործք Ի 28):

***Աստված նրանց կարգեց՝ Իր անունից հոգալու Իր զավակների մասին:***

Այս հովիվների ամենագլխավոր գործը Աստծո զավակներին դեպի ապաշխարություն առաջնորդելն է, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «... եւ տվեց մեզ հաշտության սպասավորությունը: ... Ուստի պատգամավորում ենք հանուն Քրիստոսի, իբրեւ թե Աստված է բարեխոսում մեր միջոցով. աղաչում ենք հանուն Քրիստոսի՝ հաշտվե՛ք Աստծո հետ» (Բ Կոր. Ե 18, 20):

Մի՞թե սա միջնորդություն չէ՝ Աստծո եւ մարդկանց միջեւ հաշտության համար:

Վերադառնանք այս գլխի սկզբին՝ տեսնելու եկեղեցու միջնորդության տարրերը:

**Ամեն միջնորդություն փրկության համար է:**

Մարդկանց դեպի ապաշխարություն առաջնորդելու մասին առաքյալն ասում է. «... ով մեղավորին դարձնում է մոլորության ճանապարհից, մի հոգի (ըստ գրաբ. թարգմանության՝ «իր հոգին») փրկում է մահվանից եւ ծածկում մեղքերի մի ողջ բազմություն» (Հակ. Ե 20): Ս. Հուդա առաքյալը նույնպես ասում է. «Եվ ոմանց փրկեք կրակից խլելով» (Հուդա 23):

Մարդկանց դեպի հավատ ու մկրտություն առաջնորդելը նույնպես նրանց փրկության համար է (Մարկ. ԺԶ 16): Վարդապետությունը (ուսուցանումը) նույնպես իբրեւ նպատակ ունի փրկությունը (Ա Տիմ. Դ 16): Նույն նպատակին են ծառայում նաեւ եկեղեցու կողմից կատարվող մնացած բոլոր կարգավորությունները:

*Շարունակելի*

*Թարգմանությունը՝*
*Սեդա Ստամբոլցյանի*

# ԱՐԹՆԱՑԵ՛Ք, ՁԵԶ ՈՒՂԵԿՑՈՂՆ Է ԵԿԵԼ

*Պատմում է Հատուկ գնդի շտաբի պետ, փոխգնդապետ **Սամվել Բեկթաշյանը**: Դեպքը տեղի է ունեցել Արցախյան գոյապայքարի տարիներին՝ 1992 թվականի օգոստոսին:*

Լաչինի հյուսիսարեւմտյան մասում Գոչազ սար կա, որի լերկ գագաթից 300-400 մետր ներքեւ շրջանաձեւ տարածվում էր անտառային գոտին: Անտառից ներքեւ նորից լերկ տարածություն էր՝ մինչեւ ձորը: Գոչազի գագաթին տեղակայված էին Լաչինի հյուսիսային ճակատի ձախ թեւի պաշտպանական դիրքերը, որոնք որոշիչ էին Լաչինի միջանցքի լինել-չլինելու հարցում: Արդեն որերորդ անգամ ադրբեջանցիները գիշերով մտել էին անտառ եւ շրջափակել Գոչազի գագաթի դիրքերը:

Շրջափակման մեջ էր Հատուկ գնդի 3-րդ գումարտակը: Տղաները Գոչազի գագաթին էին՝ ծովից 1700 մ բարձրության վրա, բաց, տեսանելի տարածքում: Ռազմամթերքը վերջացել էր, սնունդ չկար, վիրավորներ եւ զոհեր ունեին: Հեռվից Գոչազին նայելիս՝ սիրտս բզկտվում էր. տղաներիս կորուստն անխուսափելի էր: Երրորդ օրն էր: Հետախուզական տվյալները գուժում էին, որ հաջորդ օրը մեծ հարձակում է պատրաստվում, եւ մարդկային զոհերից բացի, կորցնում էինք նաեւ անչափ կարեւոր դիրքերը, որից հետո Արցախը կտրվում էր Հայաստանից:

Շրջափակումը ճեղքելու խնդիր կար: Դա հնարավոր էր միայն մեկ տարբերակով. զինվորը խփվում է՝ դառնալով վահան ընկերոջ համար, հետո մյուսը. այդպես, հաջորդաբար զոհվելով, պիտի ճեղքեինք շրջափակումը՝ հնարավորություն տալով հետեւից եկող զինվորներին մտնել անտառ:

Երեկոյան արդեն նախապատրաստում եմ այն 32 խենթերին, որոնք պետք է հաջորդ օրը կենդանի թիրախ դառնան թշնամու համար: Տղաներիս՝ «Ես եմ գնում» ինքնակամ որոշումը միեւնույն ժամանակ ահավոր ափսոսանք էր առաջացնում, որովհետեւ այդ տղաներից ամեն մեկը հայ զինվորի, առհասարակ մարդկային որակի անկրկնելի օրինակ էր: Հատուկ գնդի հետախուզության պետ, այժմ՝ ՊՆ մայոր Էդիկ Բաբայանը մարտից առաջ, երեւի, մարդու կենսադաշտի փոփոխության արդյունքում տեսնում էր, թե հաջորդ մարտում ով է զոհվելու: Ամեն անգամ ապշում էի ոչ թե Էդիկի ճշգրիտ տեղեկություններից, այլ հերթական նահատակին ետ պահելու անհնարինությունից: Նրանք վիրավորվում էին անգամ տվյալ մարտին չմասնակցելու իմ խնդրանքից՝ մատաղացու գառների պես գնալով զոհաբերության ընդառաջ:

Բացվում էր վճռական օրվա առավոտը: Տղաները հազիվ մեկ ժամ ննջել էին: Նայեցի Գոչազի գագաթին, որտեղ օգնության էին սպասում զինվորներս: Լույս էր, բայց արեւը դեռ չէր ծագել: «Մի տանիր զմեզ ի փորձություն»-ը տարածվել էր օդի մեջ եւ ծվարել տղաների հոգնած կոպերի տակ: Հայացքս սահեցրեցի այն հետագծով, որտեղով պետք է անցնեին զինվորներս:

Եվ հանկարծ... Ձորում՝ կամրջի մոտ, տեսա մոտ 300 մետր երկարությամբ տարօրինակորեն սպիտակ մի ամպ: Տեսա՝ ուրախացա: Անմիջապես հասկացա, որ Տիրոջ զորության վկան պիտի լինեմ: Միջովս մի ալիք անցավ՝ հուշելով, որ դա է մեր ապավենը: Արագ արթնացրի շրջափակումը բացելու ուղարկվող ջոկատի հրամանատարին, տղաներին եւ ասացի. «Ելե՛ք, ձեզ ուղեկցողը եկել է»: Նայելով ներքեւ՝ նրանք նույնպես տեսան ամպը, թեեւ Թովմասի նման երկմտեցին:

Քսան րոպե հետո զինվորներս հայտնվեցին ամպի մեջ: Եվ ով հրաշք. ամպը



սկսեց շարժվել՝ ուղեկցելով նրանց մինչեւ անտառի փեշը: Առանց որեւէ զոհերի եւ կրակոցի՝ բացեցինք շրջափակումը՝ իրականացնելով հերթափոխ՝ դուրս բերելով վիրավորներին, վերականգնելով պաշտպանական որոշիչ նշանակություն ունեցող դիրքերը:

Մարտական գործողությունների ժամանակ Տիրոջ հովանավորությունը շատ անգամ ենք զգացել: Թեեւ, երբեմն, այդ պահին չենք գիտակցել, թե ինչ է տեղի ունենում, հետո վերլուծելով ապշում էինք, թե ինչպես կարողացանք իրականացնել այս կամ այն՝ անհնար թվացող գործողությունը: Անպայման ուզում եմ նշել, որ մեր կռիվը միայն հողի, հայրենիքի կռիվ չէր: Մեր կռիվը հայի տեսակի պահպանման կռիվ էր, ինչը միշտ էլ իրականացրել են այդ տեսակի լավագույն զինվորները: Անշուշտ, ուղարկված ամպն ապացույց էր Տիրոջ համար այդ զինվորների կարեւորության:

Փառքն Աստծունն է:

*Գրի առավ*
*Հասմիկ Բաղդալյանը*

# ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

Հռոմի Պապը եւ Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Բարթուղիմեոս Ա-ն Վատիկանում ստորագրել են համատեղ հայտարարություն, որում երկուսն էլ վկայում են, որ հետեւելու են ամբողջական միության տանող ուղուն: Նրանք եւս մեկ անգամ նշել են, որ «իրենց պարտքն» են համարում վերսկսել 2000 թ. ընդհատված էկումենիկ երկխոսությունը. ընդհատման պատճառ էր դարձել արեւելյան ծեսով առաջնորդվող կաթոլիկների կարգավիճակի խնդրի քննարկումը: Հովհաննես Պողոս Բ-ն ընդունել է Տիեզերական Պատրիարքի՝ Ստամբուլ այցելելու առաջարկը:

Հռոմի Պապը մտադիր է Ռուսաստանին վերադարձնել «Կազանի Աստվածամայրը» սրբապատկերը, որը շուրջ 30 տարի գտնվում էր Պապի առանձնասենյակում: Սբ. Աթոռի պաշտոնական ներկայացուցիչը հայտնել է, որ սրբապատկերն օգոստոսի 28-ին՝ Աստվածամոր վերափոխման տոնի օրը, կհանձնվի Մոսկվայի Պատրիարքությանը: Պապը հույս է հայտնել, որ այդ քայլը կնպաստի կաթոլիկ եւ ուղղափառ եկեղեցիների միությանը:

Ալեքսի Բ-ն նշել է, որ չնայած դա այն սրբապատկերը չէ, որն իրենք փնտրում են, այնուամենայնիվ, սրբապատկերի վերադարձը հայրենիք կնպաստի ռուս ժողովրդի հոգեւոր զարթոնքին:

Իսպանիայի կառավարությունը վերջերս հաստատել է միասեռական ամուսնություններն օրինականացնելու իր մտադրությունը: Անտոնիո Լլովերա կարդինալն իր քարոզի ժամանակ ընդդիմացել է միասեռական ամուսնությունների օրինականացմանը: Նա նշել է, որ անհեթեթ է քրիստոնեական պսակի խորհուրդը համեմատել միասեռական կապի հետ. «Այսօր, երբ ընտանիքի ինստիտուտի պաշտպանությունը պետք է լինի զարգացող երկրների ղեկավարների հիմնական խնդիրը, նմանատիպ կապերի օրինականացման կոչերը ցույց են տալիս հասարակության բարոյական անկման աստիճանը»:

Երուսաղեմի Խաչի վանքում, որն այժմ տնօրինում է հունական եկեղեցին, մեծ վնաս է հասցվել Շոթա Ռուսթավելու վրացական որմնանկարին: Չճշտված տվյալներով՝ այդ քայլը կատարել են հույն վանականները, որոնք ցանկանում են ջնջել վրացական դրոշմ կրող ամեն ինչ: Այս կապակցությամբ իսրայելական կողմն արդեն պաշտոնական ներողություն է խնդրել եւ նշել, որ ամեն ինչ կարվի՝ հանցագործներին պատժելու համար: Իսրայելցի մասնագետները կարծում են, որ պատկերը հնարավոր է վերականգնել: Հունական կողմն առայժմ զերծ է մնում որեւէ մեկնաբանություն տալուց: Ըստ վրացական աղբյուրների՝ այդ արարքի պատճառներից մեկն էլ հուլիսի վերջին Վրաստանի նախագահի նախատեսվող այցն է Իսրայել, որի ընթացքում քննարկվելու է Սուրբ Երկրի վրացական վանքերը Վրաց Ուղղափառ եկեղեցուն հանձնելու հարցը:

Արտասահմանի Ռուս եկեղեցու առաջնորդ Լավր միտրոպոլիտը ոչ պաշտոնական հավաքի ժամանակ նշել է, որ ՌԴ նախագահ Վլ. Պուտինը կոչ է արել իրենց եւ Մոսկվայի Պատրիարքությանը՝ հնածեսներին նույնպես մասնակից դարձնելու միության գործընթացին: ԱՄՆ-ում տեղի ունեցած եպիսկոպոսաց ժողովի ժամանակ Լավր միտրոպոլիտը ներկայացրել է Ռուսաստան կատարած իր այցի մանրամասները: Որոշ հոգեւորականներ քննադատել են Մոսկվայի Պատրիարքության հետ միության հասնելու փորձերի շահարկումը: Հոգեւորականների մեծ մասը նշել է, որ առ այսօր Մոսկվայի Պատրիարքությունը չի դատապարտել Սերգի միտրոպոլիտի «դեկլարացիան» եւ չի դադարեցրել ԵՀԽ-ին իր անդամությունը: Բայց Լավր միտրոպոլիտը հավաստիացրել է, որ եկեղեցական ինտեգրումը «պետական գործ» է. «Մի երկնչե՛ք, մենք ամեն ինչ անում ենք Աստծո կամքով ի շահ եկեղեցու եւ ռուս ժողովրդի»:

Լատվիայի ավետարանական-լյութերական եկեղեցու առաջնորդ Յանիս Վանագս արքեպիսկոպոսը հայտարարել է, որ դեմ չէ արարողությունների ժամանակ, բացի ավանդական երաժշտությունից, նաեւ լատվիական արդի երաժշտախմբերի երգերը հնչելուն: Նա նաեւ պնդել է, որ սաղմոսների տեքստերը պետք է անփոփոխ մնան, իսկ երաժշտությունը կարող է անընդհատ փոփոխվել: Նշենք, որ Լատվիայի ավետարանական-լյութերական եկեղեցին համարվում է Եվրոպայի ամենաավանդապաշտ բողոքական եկեղեցիներից մեկը:



Այլընտրանքային սինոդի անդամ Ինոկենտի միտրոպոլիտը հայտարարել է իրենց վճռականությունը դատարան դիմելու, եթե պետության կողմից պաշտոնապես ճանաչված Բուլղար Ուղղափառ եկեղեցին աշխատի բռնագրավել իրենց ունեցվածքը: 1992-ից Բուլղար եկեղեցին բաժանվեց երկու մասի, երբ եկեղեցու ներսում ստեղծված մի խումբ հայտարարեց, որ 1971 թ. ընտրված Մաքսիմ Պատրիարքն իր աթոռն անօրինական է վարում, որովհետեւ համագործակցել է նախկին իշխանությունների հետ: Չնայած Բուլղարիայի պետությունը պաշտոնապես ճանաչում է Մաքսիմ Պատրիարքին եւ նրա իշխանությունը, սակայն բազմաթիվ եկեղեցիներ առայժմ գտնվում են հակառակորդ ճամբարի ձեռքում:

*Լրաքաղը՝*
*Տիգրան սրկ. ԲԱՂՈՒՄՅԱՆԻ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ

**հեռախոս՝**
**(0+31) 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. տպագր. 16.07.2004թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**